

*Հուլիս, 2015թ*

**Հրագրանի ՁԷԿ – Շինուհայրի ենթակայան  
Էլեկտրահաղորդման գծի վերականգնման  
ծրագիր**

**և**

**Հաղթանակ, Չարենցավան-3 և Վանաձոր-1  
ենթակայանների վերակառուցման ծրագիր**

**և**

**110կՎ Լավար ու Նոյեմբերյան  
Էլեկտրահաղորդման գծերի վերակառուցում**



**Վերաբնակեցման քաղաքականության շրջանակ (ՎՔՇ)**

**Վերջնական Հաշվետվություն**

# Բովանդակություն

<b>1. Նախաբան</b>	<b>7</b>
<b>2. Ներածություն</b>	<b>8</b>
2.1 Ծրագրի նկարագրություն	8
2.2 Ծրագրի այն բաղադրիչների նկարագրություն, որոնց համար կարող է պահանջվել հողի ձեռքբերում և վերաբնակեցում	11
2.3 Վերաբնակեցման քաղաքականության պատրաստման շրջանակի անհրաժեշտությունը (ՎՔՇ)	12
2.4 Վերաբնակեցման նախապատրաստման և իրականացման սկզբունքները և նպատակները	13
2.5 Վերաբնակեցման շրջանակը ծրագրի ներքո	14
<b>3. Ինստիտուցիոնալ և իրավական դաշտ</b>	<b>16</b>
3.1 Ինստիտուցիոնալ դաշտ	16
3.2 Օրենսդրական դաշտ	19
3.3 ՀՀ օրենսդրության և Համաշխարհային բանկի պարտադրված վերաբնակեցման քաղաքականության համեմատություն	21
3.4 Բացերի վերլուծություն	22
<b>4. Փոխհատուցման տրամադրման չափանիշները</b>	<b>23</b>
4.1 Փոխհատուցման իրավունք	23
4.2 Փոխհատուցման իրավունքի շրջանակը	24
4.3 Ակտիվների գնահատման մեթոդները	27
<b>5. ՎԳՊ պատրաստում, վերանայում և հաստատում</b>	<b>29</b>
<b>6. Իրականացման գործընթաց</b>	<b>30</b>
6.1 ՎԳՊ իրականացման գործընթացը	30
6.2 Բողոքների դիտարկման և բավարարման մեխանիզմ	34
6.3 Ինստիտուցիոնալ կարողություններ	35
6.4 Մշտադիտարկում	35
<b>7. Հանրային քննարկումներ և տեղեկատվության հրապարակում</b>	<b>37</b>
<b>8. Ծախսեր և բյուջե</b>	<b>40</b>
<b>9. Հավելվածներ</b>	<b>56</b>
Իրավունք և փոխհատուցման աղյուսակ	56
Մարդահամարի տվյալների ցուցակ	59
9.2 Մարդահամարի անցկացման ձևաթղթի նմուշ	61
9.3 Կորուստների գույքագրման Ձևաթղթի նմուշ	62
10. Հանրային քննարկումների հանդիպման արձագանքություններ	70

**ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

ԱԶԲ	Ասիական Չարգացման Բանկ
ՇԿ	Շինարար Կապալառու
ՏԱ	Տեղահանված անձ
ՎԶԵԲ	Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ
ԷՄԴ	Էլեկտրական և մագնիսական դաշտեր
ԲՍԱԳ	Բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատում
ԲՍԿԾ	Բնապահպանական և սոցիալական կառավարման ծրագիր
ԷՀԷԾ	Էլեկտրամատակարարման հուսալիության և էներգախնայողության ծրագիր
ԷՄՀԾ ԼՖ	Էլեկտրամատակարարման հուսալիության ծրագրի Լրացուցիչ ֆինանսավորում
ԲԷՑ	Բարձրավոլտ էլեկտրական ցանցեր
ԿՎ	Կիլովոլտ
ԿՎԺ	Կիլովատ-ժամ
ՄՎԺ	Մեգավատ-ժամ
ԲՆ	Բնապահպանության նախարարություն
ԷԲՊՇ	Էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն
ԲՆ	Բնապահպանության Նախարարություն
ՄՆ	Մշակույթի Նախարարություն
ՏԿՄ	Տրանսպորտի և Կապի Նախարարություն
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ԳԴ	Գործառնական դիրեկտիվ (Համաշխարհային բանկի)
ԳՔ	Գործառնական քաղաքականություն (Համաշխարհային բանկի)
ԱԵԱ	Ազդեցություն ենթարկված անձինք
ՆՄՌ	Նյութական մշակութային ռեսուրսներ
ՎԷԷՀ	Վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամ
ՎԳՊ	Վերաբնակեցման գործողությունների պլան
ԱԳ	Անվտանգության գոտի
ՎՔՇ	Վերաբնակեցման քաղաքականության շրջանակ
ՌԲԳ	Ռազմավարական բնապահպանական գնահատում
ՊՈԱԿ	Պետական ոչ առևտրային կազմակերպություն
ՄԶԲ	ՄԱԿ-ի զարգացման ծրագիր
ՀԲ	Համաշխարհային բանկ
ԲՀՀ	Բնության համաշխարհային հիմնադրամ

## Մահմանումներ

Բանկի տերմինաբանությամբ, վերաբնակեցում նշանակում է հողի զբաղեցումից կամ հողօգտագործման սահմանափակումից առաջացող բոլոր տնտեսական և սոցիալական վնասները, ինչպես նաև դրանից բխող փոխհատուցման և մեղմացման միջոցառումները:

Կախված դեպքից, վերաբնակեցումը կարող է ներառել՝ (ա) հողի կամ հողի վրա գտնվող կառույցների ձեռքբերում, ներառյալ ձեռնարկատիրական գործունեության հետ կապված կառույցները, (բ) փաստացի վերաբնակեցում և (գ) տեղահանման տնտեսական հետևանքների հասցեագրում տեղահանված անձանց (SU) եկամուտների և կենսամակարդակի բարելավման համար (կամ առնվազն նախկին մակարդակի վերականգնում):

Ազդեցություն կրող անձինք (ԱԵԱ)՝ անձինք, ովքեր տուժում են ծրագրի ուղղակի տնտեսական և սոցիալական ազդեցությունից, որը կարող է արտահայտվել հետևյալ կերպ.

- Ակտիվների կորուստ կամ վնասում,
- Պետական կարիքների համար հողի օտարում,
- Պարտադրված տեղահանում,
- Բացասական ազդեցություն ձեռքբերված կամ սեփականություն հանդիսացող (Ժամանակավոր կամ մշտական) ցանկացած բնակելի շինության, հողի (ներառյալ հողի վրա գտնվող շինությունները, գյուղատնտեսական նշանակության հողերը և առոտավայրերը) կամ ցանկացած այլ հիմնական միջոցի նկատմամբ իրավունքների, սեփականության իրավունքի կամ այլ տնտեսական շահերի վրա:
- Բացասական ազդեցություն արտադրական նշանակության ակտիվների հասանելիության վրա (Ժամանակավոր կամ մշտական):
- Բացասական ազդեցություն ձեռնարկատիրական գործունեության, զբաղվածության, աշխատանքի կամ բնակության վայրի վրա:

Վերաբնակեցման քաղաքականության շրջանակը՝ վերաբնակեցումը կարգավորող փաստաթուղթ է, որը պատրաստվում է, երբ ծրագրի գնահատման փուլում վերաբնակեցման ծավալներն ու աշխարհագրական տեղանքները հստակ հայտն չեն, քանի որ ծրագիրն ունի բազմաթիվ բաղադրիչներ կամ ծրագրի վերջնական նախագծի մշակումը (ինչպես որ այս դեպքում) ավարտվելու է ավելի ուշ (շինարարության փուլի աշխատանքային նախագծեր): Քաղաքականության շրջանակը սահմանում է ծրագրի իրագործման ընթացքում հնարավոր վերաբնակեցման գործողության նպատակներն ու սկզբունքները, կազմակերպական լուծումները և ֆինանսավորման մեխանիզմները: Շրջանակը նաև գնահատում է ծրագրի ազդեցության կրողների և վերաբնակեցումների հավանական թիվը, հատկապես ֆինանսական միջնորդություն ենթադրող ծրագրերում, և գնահատում հնարավոր վերաբնակեցման նախապատրաստման, իրականացման և վերահսկողության ինստիտուցիոնալ կարողությունները: Երբ ծրագրի իրականացման ընթացքում վերաբնակեցման չափերը հստակեցվում են, ապա մինչ ծրագրի ֆինանսավորման հաստատումը ՎԳՊ է պատրաստվում (ԳՔ 4.12, պարբ. 29–30):

Վերաբնակեցման գործողությունների պլանը (ՎԳՊ)՝ վերաբնակեցման փաստաթուղթ է, որը պատրաստվում է երբ հստակեցվում է ծրագրի աշխարհագրական դիրքը, այն է՝ հայտնի են էլեկտրահաղորդման գծի մանրամասն ծրագիծը և հենասյունների հստակ դիրքերը: Եթե էլեկտրահաղորդման գծի վերջնական ծրագիծը չի բավարարում օրենքով սահմանված անվտանգության գոտու նվազագույն պահանջներին, ապա հողի ձեռքբերումը հանգեցնում է մարդկանց ֆիզիկական տեղահանման և/կամ ապաստանի կորստի, և/կամ եկամտի աղբյուրի կորստի, և/կամ տնտեսական ռեսուրսների անհասանելիության կամ հասանելիության սահմանափակման: ՎԳՊ-ն պատրաստում է մարդկան կամ նրանց եկամուտների վրա ազդեցության սկզբնապատճառ հանդիսացող կողմը: ՎԳՊ-ն պարունակում է մանրամասն և իրավական տեսանկյունից պարտավորություն հանդիսացող պահանջներ, որին համաձայն պետք է կատարվի մարդկանց տեղահանումը և փոխհատուցումը մինչ բացասական հետևանքներ ունեցող միջոցառումների իրականացումը: ՎԳՊ-ն պարունակում է ծրագրի ազդեցությունը կրողների մարդահամարի արդյունքները, ներառյալ կադաստրային տեղեկատվություն և կորուստների մանրամասն ցուցակ:

Փոխհատուցում՝ վճարում հողի օտարման կամ այլ ակտիվների, ներառյալ հիմնական միջոցների, մասնակի կամ ամբողջական կորստի դիմաց, որը կատարվում է բնաիրային, դրամական կամ այլ ակտիվներով փոխհատուցման եղանակով:

Հողի ձեռքբերում՝ հողի, շինությունների կամ դրա վրա գտնվող այլ գույքի նկատմամբ ծրագրի իրականացման նպատակով իրավունքների ձեռքբերում կամ օտարում:

Գյուղատնտեսական նշանակության հողակտորների փոխհատուցման արժեք՝ հավասար արտադրողական կամ օգտագործման ներուժով և ծրագրից տուժած հողակտորի մոտակայքում գտնվող այլ հողակտորի մինչև ծրագրի սկիզբը կամ տեղահանումը ունեցած արժեքն է (որը որ ավելի բարձր է) գումարած հետևյալ ծախսերը՝ հողակտորի նախապատրաստման, որպեսզի այն ունենա նույն հատկանիշները, ինչ որ ծրագրից տուժած հողակտորը; պետական գրանցման տուրքերն ու վճարները; փոխանցման հետ կապված հարկերը և այլ հողակտորի տրամադրման հետ կապված վճարներն ու տուրքերը:

Տների կամ այլ շինությունների փոխհատուցման արժեք՝ ծրագրից տուժած շինությունների որակին հավասար կամ ավելի լավ որակի և նույն տարածքում գտնվող կառույցների շուկայական արժեքը: Այդ արժեքը պետք է ներառի.

- ա) շինարարական նյութերը,
- բ) շինհրապարակ շինանյութերի տեղափոխման ծախսերը,
- գ) վարձու աշխատողների և կապալառուների վարձատրությունը,
- դ) գրանցման բոլոր ծախսերը:

Վերջնաժամկետ՝ ծրագրի աշխարհագրական սահմաններում ծրագրի ազդեցությունը կրողների մարդահամարի մեկնարկման ամսաթիվ: Դա այն ամսաթիվն է, որից հետո ծրագրի նպատակներով հողի զբաղեցման կամ ձեռքբերման դիմաց ոչ մի փոխհատուցում չի տրամադրվում:

Խոցելի խմբեր՝ մարդիկ ովքեր չեն կարող համակերպվել ճգնաժամային կամ շոկային իրավիճակներին և պահպանել իրենց եկամտի աղբյուրը: Գործնականում այդ մարդկանց թվին սովորաբար դասվում են.

- Այրի կանայք, հաշմանդամները, ցածր եկամտով տնային տնտեսությունները և սովերային ոլորտում գործունեություն իրականացնողները:
- Եկամուտ վաստակողից զուրկ տնային տնտեսությունները:
- Երեխաների գլխավորած տնային տնտեսությունները և անօթևան երեխաները:

Վերոնշյալ խմբերը սովորաբար տառապում են թերսնուցումից, ունեն ցածր կրթական մակարդակ կամ ընդհանրապես կրթություն չունեն, գործազուրկ են և չունեն եկամտի աղբյուր, բարձր տարիքի են, հանդիսանում են էթնիկական փոքրամասնություն և առկա է գենդերային անհավասարակշռություն:

# 1. Նախարան

Վերաբնակեցման քաղաքականության շրջանակի (ՎՔՇ) սույն հաշվետվության նախագծի նպատակը՝ Հրազդան – Շինուհայր 220 կՎ էլեկտրահաղորդման գծի վերակառուցման և 110կՎ Լավար և Նոյեմբերյան գծերի փոխարինման, ինչպես նաև Հաղթանակ, Չարենցավան-3 ու Վանաձոր-1 ենթակայանների (ԵԿ) վերակառուցման, (ԼՏ ԷՍՀՇ) ժամանակ վերաբնակեցման սկզբունքների և կազմակերպական լուծումների պարզաբանումն է:

Քանի որ գործնականում կատարվելու է գծի փոխարինում նորով և այն պետք է տեխնիկական պատճառներով մոտ 50 մետր տեղափոխվի որևէ ուղղությամբ, կկառուցվեն ներկայիս ծրագրի շրջանցող որոշ հատվածներ, և Հաղթանակ, Չարենցավան-3 և Վանաձոր-1 ենթակայաններում: Էլեկտրահաղորդման գլխավոր ակտիվները ենթակա են վերակառուցման ապա պետք է դիտարկել հողի ձեռքբերման, փոխհատուցման և վերաբնակեցման հնարավոր խնդիրները: Ներկայիս ՎՔՇ նպատակն է՝ ստեղծել ՎԳՊ հենքը և ԲԷՑ-ին օժանդակել պլանավորել և իրականացնել ծրագրի ազդեցության կրողների փոխհատուցմանը և վերաբնակեցմանը վերաբերող դրույթները:

Ներկայիս փաստաթղթի պատրաստման համար էլեկտրահաղորդման գծի ամբողջ երկայնքով և ենթակայանների տարածքներում իրականացվել է համապարփակ ուսումնասիրություն, ներառյալ քննարկումներ ծրագրի ազդեցության հնարավոր կրողների և հարցազրույցներ շահագրգիռ կողմերի հետ: ԲԷՑ-ի ներկայացուցիչների հետ քննարկվել են այն բոլոր խնդիրները, որոնք կապված են զգայուն տարածքների հետ՝ գծի ազդեցությունը ենթակա գյուղերը և գծի ծրագրի որոշ շրջանցումներ: Գծի նախագծման փուլի ճկունությունը ողջունելի է, քանի որ այն թույլ կտա առավելագույնս խուսափել բնակավայրերից և այլ մեծ ազդեցության ներուժով գոտիներից (տես ԲՄԱԳ հաշվետվությունը):

Էլեկտրահաղորդման գծի վերջնական նախագծի պատրաստման ժամանակ հարկավոր է անցկացնել խորքային հանրային քննարկումներ և սոցիալ-տնտեսական հարցում, ներառյալ ծրագրի ազդեցության հնարավոր կրողների մարդահամար, հողի կադաստրային տեղեկատվության հավաքագրում և հնարավոր կորուստների ցուցակագրում:

Դաշտային ուսումնասիրությունները լրացվել են արբանյակային նկարների մանրամասն ուսումնասիրությամբ, ինչպես նաև իրավական և ինստիտուցիոնալ դաշտի տեղացի իրավաբանի կողմից կատարված վերլուծությամբ: Վերլուծության և ուսումնասիրությունների ժամանակ շեշտադրվել էին հողի ձեռքբերման/պետական կարիքների համար օտարման ներկայիս պրակտիկան, գնահատման մեթոդոլոգիաների և գույքային իրավունքների խնդիրները: Ծրագրի նպատակների համար ուսումնասիրվել և ադապտացվել էր այլ ոլորտներում նմանատիպ խնդիրների լուծման փորձը:

## 2. Ներածություն

### 2.1 Ծրագրի նկարագրություն

Ա) Հրագրան – Շինուհայր 220 կՎ էլեկտրահաղորդման գծի վերակառուցում:

ՀՀ Կառավարությունը Համաշխարհային բանկից (ՀԲ) օժանդակություն է խնդրել էլեկտրամատակարարման հուսալիության և էներգախնայողության ծրագրի (ԷՀԷԾ) բնապահպանական ուսումնասիրությունների համար: Բացառությամբ էներգախնայողության բաղադրիչի, ԷՀԷԾ-ը նպատակ ունի վերակառուցել Հրագրանի ՁԷԿ-ի ենթակայանից (հյուսիս-արևելք) մինչև Շինուհայրի ենթակայան (հարավ) ձգվող 230 կՎ երկարությամբ բարձրավոլտ գիծը ցանցի հուսալիությունը բարձրացնելու և գծի թողունակությունը ավելացնելու համար:

Էլեկտրահաղորդման գծի վերակառուցման բաղադրիչը (այսուհետ՝ ծրագիր) բաղկացած է հինգ առանձին հատվածներից՝ Նորադուզ (45 կՎ), Լիճք (25 կՎ), Վարդենիս (45 կՎ), Վայք (70 կՎ) և Վորոտան (40 կՎ), որոնք անցնում են երկրի կենտրոնական մարզերով (օրինակ՝ Կոտայքի մարզ)՝ հատելով Վայք քաղաքը, և ավարտվում երկրի հարավում (Սյունիքի մարզ, Գորիս քաղաքի մերձակայքում): Գծի ընդհանուր երկարությունը կազմում է մոտ 225-230 կմ: Ենթակայաններն ու էլեկտրակայանները գտնվում են Հրագրանում (Հրագրանի ջերմային էլեկտրակայան), Գավառում, Լիճքում, Եղեգնաձորում, Շաղաթ գյուղում (Սպանդարյան հիդրոէլեկտրակայան) և Շինուհայրում: Ծրագիրը նախատեսում է նոր հենասյուների մոնտաժում, ներառյալ հիմքերը, ինչպես նաև էլեկտրահաղորդման լարերի, մեկուսիչների և այլ առանցքային ենթակառուցվածքների փոխարինում:

Նոր գիծը հիմնականում գուգահեռ է լինելու հնին (մոտ 50 մետր հեռավորության վրա): Այն հիմնականում անցնելու է նույն անվտանգության գոտիով (ԱԳ) և շեղվելու է բնակավայրերը, մշակութային նշանակության հատվածները և դժվարին տեղանքը շրջանցելու համար:

Գործող գիծը շահագործման է հանձնվել 1956թ.-ին և հասել է իր օգտակար ծառայության սահմանագծին: Վերականգման արդյունքում ներկայիս 300 մմ տրամագծով էլեկտրահաղորդիչ լարերը կփոխարինվեն նոր 400 մմ տրամագծով էլեկտրահաղորդիչ լարերով գծի թողունակությունը և հուսալիությունը բարելավելու համար:

Գծի օտարման շերտում գտնվող հողակտորները մասնավոր են կամ տեղական համայնքների սեփականությունն են և օգտագործվում են գյուղատնտեսական և այգեգործական նպատակներով, ինչպես նաև ծառայում որպես առտավայրեր և կենդանիների կերի ստացման աղբյուր: Կան նաև փոքր տարածքով հողակտորներ, որոնք անտառային հողեր են:

Ներկայիս գիծն անցնում է մեծ թվով գյուղական և քաղաքային բնակավայրերով, որտեղ օտարման շերտը առանց հողի ձեռքբերման հնարավոր չի լինի 50 մետրով տեղաշարժել:



Այդ իսկ պատճառով, բնակավայրերից և բնակիչների պարտադրված տեղահանումից խուսափելու համար ընտրվել են շրջանցման ուղիներ:

Ակնկալվում է, որ տեղահանված մարդկանց թիվը նվազագույն կլինի, եթե բոլոր շրջանցումները կառուցվեն՝ հետևելով նախնական նախագծերի/տեխնիկատնտեսական ուսումնասիրության փուլի առաջարկությունների:

Լրացուցիչ բաղադրիչ (ԷՄՀԾ ԼՖ) է հետևյալը՝

Բ) Լավար և Նոյեմբերյան 110 կՎ գծեր

Առաջարկված 110կՎ Լավար և Նոյեմբերյան ՕԷԳ-ը, որն ունի մոտավորապես 25 կմ երկարություն պլանավորված է որպես երկշղթա գիծ նոր միջանցքում գործող գծից 50մ հեռավորության վրա:

ՕԷԳ-ը սկսվում է Ալավերդի-2 ենթակայանից (ծովի մակարդակից 960մ բարձրության վրա) և ավարտվում է Նոյեմբերյան ենթակայանում: Սկսվելով Ալավերդի-2 ենթակայանից՝ այն անցնում է Դեբեդ գետից բավականին բարձր գտնվող Սանահինի կանաչապատ հարթավայրով: Հետո անցնում է երկու կիրճերի վրայով, ապա Հաղպատ գյուղի ծայրով և այլ հարթավայրերով ու հատում է Դեբեդ գետի կիրճի աջակողմյան զառիթափ անտառային թեքությունները, որտեղ պլանավորված է T-աձև ճյուղավորմամբ դեպի «Ախթալա» քարշային ենթակայանը: Նեղոցի մարգագետնում այն թռիչք է կատարում կիրճի վրայով, որի ներքևում բնակավայր կա և շարունակում է անտառային թեքության երկայնքով: Գիծը շարունակվում է անցնել գետի աջ ափով, բայց շուտով հատում է ճանապարհը և գետը՝ ձախ ափ և Փոքր Այրումի (Դեբեդի կիրճի վերևում) կանաչապատ հարթավայրը անցելով: Այնտեղից գիծը շարունակվում է կիրճի ծայրով Փոքր Այրումի և Մեծ Այրումի դաշտերի և կանաչապատ հարթավայրերի վրայով, ապա թռիչք է կատարում ևս մեկ կիրճի վրայով և Դեբեդ գետն ու Հաղթանակ գյուղ տանող ճանապարհը հատելուց հետո շուտով հասնում է ենթակայան:

Գ) Հաղթանակ, Չարենցավան-3 և Վանաձոր-1 ենթակայանների վերակառուցում

Էլեկտրամատակարարման հուսալիության ծրագրի Լրացուցիչ ֆինանսավորումը (ԷՀԾ ԼՖ), որի համար դիմել է Հայաստանի կառավարությունը, ուղղված է էլեկտրահաղորդման գլխավոր ակտիվների փոխարինման միջոցով բարձրացնելու էլեկտրահաղորդման ցանցի հուսալիությունն ու կարողությունը: Այդ նպատակին հասնելու համար ԷՀԾ ԼՖ-ում ընդգրկվել է Հաղթանակ ենթակայանի ամբողջական վերակառուցումը ու ընդլայնումը, Չարենցավան-3 ենթակայանի ամբողջական վերակառուցումը և Վանաձոր-1 ենթակայանի վերակառուցումը: Սույն ծրագրի Բաղադրիչ 1-ի աշխատանքների շրջանակը հետևյալն է.

- Հաղթանակ ենթակայան: Ենթակայանը շահագործման է հանձնվել 1988թ., որից հետո չի հիմնանորոգվել: Պահեստամասերի բացակայության և բետոնե հիմքերի ու պողպատյա հենարանների քայքայման պատճառով Հիմնական սարքավորումները և օժանդակ կառույցները ունեն փոխարինման կարիք: Սարքավորումների վատ վիճակը կավելացնի սարքավորումների խափանման պատճառով անջատումների հաճախականությունը: Վերակառուցման աշխատանքներն ընդգրկվելու են՝ (ա)

220կՎ բաց բաշխիչ հրապարակի ամբողջական փոխարինումը, (բ) երկու 220կՎ գլխավոր տրանսֆորմատորների փոխարինումը, (գ) 10կՎ բաշխիչ վահանակի պանելների և դրանց հետ կապված շենքի փոխարինումը, (դ) SCADA համակարգի տեղադրումը և պաշտպանիչ ռելեի փոխարինումը և (ե) հսկման և բաշխման կենտրոնի նոր շենքի կառուցումը: ԲԷՑ-ը նաև առաջարկել է կառուցել նոր 110կՎ բաց բաշխիչ հրապարակ՝ չորս օդային էլեկտրահաղորդման գծերով (ՕԷԳ), Երևան քաղաքի արևմտյան մասերը սնուցող Շահումյան ենթակայանի բեռնվածությունը նվազեցնելու և էլեկտրամակարարման հուսալիությունը բարձրացնելու նպատակով: Այս բոլոր աշխատանքները կատարվելու են ենթակայանի ներկա տարածքի սահմաններում:

Հաղթանակի ենթակայանը գտնվում է մայրաքաղաք Երևանի արևմտյան մասում: Շինարարության տարածքն ունի հարթ մակերես և շրջապատված է խաղողի փոքր այգիներով հարավից և հարավ-արևելքից և փոքր արտադրական ցեխերով արևմուտքից և հարավ-արևմուտքից: Խաղողի այգիները պատկանում են հարևան գյուղական համայնքների ռեզիդենտներին և մշակվում է նրանց կողմից անձնական օգտագործման նպատակներով: Չկառուցապատված հողերը գտնվում են ենթակայանից հյուսիս: Ամենամոտ բնակելի գոտին գտնվում է ենթակայանից մոտ 300մ հեռավորության վրա:

- Չարենցավան-3 ենթակայան: Ենթակայանը շահագործման է հանձնվել 1985թ., որից հետո չի վերակառուցվել: Սարքավորումների վատ վիճակը երբեմն դարձել է անտեղի անջատումների պատճառ ոչ միայն բաշխիչ բաժանորդների, այլև այլ միացված ենթակայանների համար, որովհետև Չարենցավան-3 ենթակայանը կատարում է բաշխիչ կայանի դեր և ունի ութ 110կՎ ՕԷԳ-ներ: Վերակառուցման աշխատանքներն ընդգրկելու են՝ (ա) 110կՎ բաց բաշխիչ հրապարակի ամբողջական փոխարինումը, (բ) երկու 110կՎ գլխավոր տրանսֆորմատորների (ԳՏ) փոխարինումը, (գ) 10կՎ բաշխիչ վահանակի պանելների և դրանց հետ կապված շենքի փոխարինումը, (դ) SCADA համակարգի տեղադրումը և պաշտպանության ռելեների փոխարինումը, (ե) հսկման և բաշխման կենտրոնի նոր շենքի կառուցումը: Այս բոլոր աշխատանքները կատարվելու են ենթակայանի ներկա տարածքի սահմաններում:

Չարենցավան-3 ենթակայանը գտնվում է Չարենցավան քաղաքի (Կոտայքի մարզ) հյուսիս-արևելքում՝ Հայաստանի հյուսիս-արևմտյան մասում: Շինարարության վայրն ունի հարթ մակերես և շրջապատված է ցորենի դաշտերով հյուսիսից և հյուսիս-արևելքից և ազնվամորու դաշտերով հարավ-արևելքից: Սրանք մասնավոր հողեր են: Հյուսիս-արևմուտքում մարգագետիններ են, իսկ ենթակայանի արևմուտքում, հարավ-արևմուտքում և հարավում խնձորի, ծիրանի և կեռասի ծառեր և լոբու դաշտեր են, որի հանդիսանում են պետական հողեր: Հողօգտագործումը գրանցված չէ: Ամբողջ բերքը աճեցվում է հարևան համայնքների ռեզիդենտների կողմից անձնական օգտագործման նպատակներով: Ամենամոտ բնակելի գոտին գտնվում է մոտ 1կմ հեռավորության վրա:

- Վանաձոր-1 ենթակայան: Ենթակայանը շահագործման էր հանձնվել 1933թ. և մասնակի վերակառուցվել է 1960-ական թվականներին: Ենթակայանի 110կՎ

հատվածի մոտ կեսն, այդ թվում մեկ էլեկտրահաղորդման գծի բջիջը, երկու գլխավոր ավտոտրանսֆորմատորային բջիջները և գլխավոր հաղորդաձողերը վերակառուցվել էին 2008-2010թթ. KfW-ի ֆինանսավորած ծրագրի շրջանակում: Այնուամենայնիվ, ենթակայանի մնացած հատվածներն ունեն հիմնանորոգման կարիք: Վերակառուցման աշխատանքներն ընդգրկելու են՝ (ա) մնացած 110կՎ բջիջները և գլխավոր հաղորդաձողերը, (բ) երկու գլխավոր տրանսֆորմատորային բջիջները և (գ) 6կՎ և 10կՎ հատվածները՝ դրանց հետ կապված SCADA համակարգով ու պաշտպանիչ ռելեներով: Այս բոլոր աշխատանքները կատարվելու են ենթակայանի ներկա տարածքի սահմաններում:

Վանաձոր-1 ենթակայանը գտնվում է Վանաձոր քաղաքում (Լոռու մարզ)՝ Հայաստանի հյուսիս-արևմուտքում: Շինարարության վայրն ունի համարյա հարթ մակերես և արևելքից, հարավից և հարավ-արևմուտքից շրջապատված է քիմիական կոմբինատով: Ենթակայանից հյուսիս և հյուսիս-արևելք՝ հարակից ճանապարհի մյուս կողմում, կա քարշային ենթակայան և լցակայան: Ամենամոտ բնակելի տունը 150մ հեռավորության վրա է:

## **2.2 Ծրագրի այն բաղադրիչների նկարագրություն, որոնց համար հնարավոր է կատարվի հողի ձեռքբերում և վերաբնակեցում**

### Ա) Հրագրան – Շինուհայր 220 կՎ էլեկտրահաղորդման գծի վերակառուցում

Քանի որ նոր գիծը ամբողջությամբ չի գտնվելու հին օտարման շերտի սահմաններում, ապա հողակտորների և հողօգտագործման վրա մշտական ազդեցության դեպքում առաջանալու է հողի ձեռքբերման անհրաժեշտություն (հաշվի առնելով բարձրության սահմանափակումները): Եթե տները հայտնվեն գծի օտարման շերտում և անվտանգ հեռավորության նվազագույն պահանջները չբավարարվեն, ապա կառաջանա վերաբնակեցման անհրաժեշտություն:

Հողի ձեռքբերումն անհրաժեշտ կլինի.

- հենասյուների հիմքի կառուցման համար,
- տեղահանվողներին նոր հողակտորներ տրամադրելու համար:

Տեղահանում կպահանջվի.

- Այն տնային տնտեսությունների համար, որոնք գտնվում են վերջնական ծրագրի միջանցքի սահմաններում և որոնց համար հնարավոր չէ պահպանել անվտանգ հեռավորությունը/էլեկտրամագնիսական դաշտի անվտանգության կանոնները:

Փոխհատուցում կպահանջվի.

- Հողաչափման աշխատանքների դեպքում բերքին/ծառերին հասցված վնասի դեպքում:
- Շինհրապարակի հասանելիությունն ապահովող ճանապարհների կառուցման ժամանակ բերքը/հողակտորները վնասելու դեպքում:
- Հենասյուների մոնտաժման նախապատրաստման և էլեկտրահաղորդման լարերի մոնտաժման ժամանակ բերքի վնասման դեպքում:

- Հողերի համար, որոնք անհրաժեշտ կլինեն Ժամանակավոր մոտեցման ճանապարհների համար

Անվտանգության գոտում հնարավոր կլինի իրականացնել գյուղատնտեսական գործունեություն և կենդանիների արածում, բացառությամբ հողակտորների այն հատվածների, որոնց վրա կառուցվելու են հենասյուների հիմքերը:

Մանրամասների համար վկայակոչում ենք համապատասխան ԲՄԱԳ և ԲՄԿՊ հաշվետվությունները:

#### Բ) 110կՎ Լալվար և Նոյեմբերյան Էլեկտրահաղորդման գծի վերակառուցում

110կՎ Լալվար և Նոյեմբերյան ՕԷԳ վերակառուցումը (անցնում է Ալավերդի-2 ե ենթակայանից դեպի Նոյեմբերյան ենթակայան) գծի կառուցում նոր միջանցքում՝ հին գծից մեծամասամբ բաժանված 50մ-ով, բայց երբեմն ավելի մեծ շեղումներ կպահանջեն տներից, անտառներից և այլնից խուսափելու համար: Գծի ծրագիծն ունի մի քանի լայն թռիչքներ կիրճերի վրայով (400-ից 600մ լայնության սահմաններում): Քանի որ գիծը կունենա նոր միջանցք, անհրաժեշտ կլինի կատարել բնապահպանական ուսումնասիրության, համաձայն ՀՀ օրենքի: Տների ֆիզիկական վերաբնակեցումից կարելի է լիովին խուսափել օպտիմալացնելով տեխնիկական նախագիծը: Եթադրվում է, որ ծրագիրը պատկանում է B կատեգորիային, այնուամենայնիվ վերջնական նախագիծը դեռ առկա չէ այս գնահատումը հաստատելու համար:

Մանրամասների համար վկայակոչում ենք համապատասխան ԲՄԱԳ և ԲՄԿՊ հաշվետվությունները:

#### Գ) Հաղթանակ, Չարենցավան-3 և Վանաձոր-1 ենթակայանների վերակառուցում

##### Հաղթանակ ենթակայանի վերակառուցում և ընդարձակում:

Ենթակայանի մուտքի մոտով անցնող պետական ճանապարհը օգտագործվելու է հյուսիսից տեղանքին մոտենալու համար: Մերձատար ճանապարհների օգտագործումը չի սահմանափակի գյուղատնտեսական հողերի հասանելիությունը: Բոլոր շինարարական մեքենաներն ու սարքավորումները կայանվելու են ցանկապատված գոտու ներսում: Ծրագրի իրականացումը որևէ ժամանակավոր կամ մշտական ազդեցություն չի ունենա հարևան փոքր գործարանների/արհեստանոցների վրա:

##### Չարենցավան-3 ենթակայանի վերակառուցում:

Ենթակայանի մուտքի մոտով անցնող պետական ճանապարհը բարձրորակ է և օգտագործվելու է շինարարական աշխատանքների ընթացքում հյուսիս-արևելքից տեղանքին մոտենալու համար: Բացի այդ, ենթակայանի տարածքը շատ մեծ է և կարող է ամբողջությամբ տեղավորել շինանյութերի, մեքենաների և սարքավորումների պահեստները: Ծրագրի իրականացումը որևէ ժամանակավոր կամ մշտական ազդեցություն հարևան հողատերերի համար չի ունենա:

## Վանաձոր-1 ենթակայանի վերակառուցում:

Ենթակայանի մուտքի մոտով անցնող պետական ճանապարհը օգտագործվելու է շինարարական աշխատանքների ընթացքում հյուսիսից տեղանքին մոտենալու համար: Հիմնանորոգման աշխատանքների ընթացքում շինարարական մեքենաները մասնավոր հողակտորներ չեն հատի: Բոլոր շինարարական մեքենաներն ու սարքավորումները կայանվելու են ցանկապատված գոտու ներսում: Ծրագրի իրականացումը որևէ ժամանակավոր կամ մշտական ազդեցություն հարևանությամբ գտնվող քիմիական կոմբինատի վրա չի ունենա:

Եթե որևէ պատճառով անհրաժեշտ լինի երեք ենթակայաններից որևէ մեկին մոտենալու կամ սարքավորումները պահելու նպատակով օգտագործել մասնավոր հողերը, ապա ԲԷՑ-ը կմշակի տեղանքին հարմարեցված, կրճատ Վերաբնակեցման գործողությունների ծրագիր, որը կհամապատասխանի սույն ՎՔՇ դրույթներին, և նախքան շինարարությունը սկսելը Համաշխարհային բանկին կներկայացնի ՎԳՊ իրականացման վերաբերյալ հաշվետվություն: Սա ծայրահեղ դեպք է, և վերաբնակեցումներ չեն նախատեսվում:

### **2.3 Վերաբնակեցման քաղաքականության պատրաստման շրջանակի անհրաժեշտությունը (ՎՔՇ)**

Ծրագրի այս փուլում հնարավոր չէ մշակել վերաբնակեցման գործողությունների պլան (ՎԳՊ), քանի որ էլեկտրամատակարարման գծի ծրագրի վերջնական նախագիծը դեռ պատրաստ չէ: Հենայունների դիրքերը կամրագրվեն հողաչափման աշխատանքների ժամանակ, որոնք կապալառուն պետք է իրականացնի շինարարական աշխատանքներից առաջ: Բացի այդ, ենթակայանների հիմնանորոգման հետևանքով վերաբնակեցման անհրաժեշտության ծագում չի նախատեսվում: Սույն ՎՔՇ-ն կազմվել է օժանդակելու ծրագիրն իրագործողին ՎԳՊ միջոցառումների իրականացմանը նախապատրաստվելու համար: Սույն փաստաթղթի նպատակն է՝ պարզաբանել ծրագրի շրջանակում պատրաստվող ենթածրագրերի նկատմամբ կիրառվող վերաբնակեցման սկզբունքները, կազմակերպական լուծումները և նախագծման չափանիշները: ՎՔՇ-ն պարունակում է տեղեկատվություն, որը հետագայում օգտագործվելու է ՎԳՊ համար: ՎԳՊ-ն կամ Հակիրճ ՎԳՊ-ն (ըստ անհրաժեշտության) հետագայում պետք է լրացվեն մանրակրկիտ հարցման արդյունքներով, ներառյալ կադաստրային տեղեկատվություն, կորուստների ցուցակ և ծրագրի ազդեցության կրողների ակտիվ ներգրավում և խորհրդակցություն: Առկա է էլեկտրահաղորդման գծերի առանձին հատվածների և /կամ ենթակայանների համար ՎԳՊ պատրաստելու հավանականություն:

### **2.4 Վերաբնակեցման նախապատրաստման և իրականացման սկզբունքները և նպատակները**

Համաձայն ԳՔ 4.12-ի՝ «հնարավորության դեպքում պետք է խուսափել պարտադրված տեղահանումից կամ այն պետք է հասցնել նվազագույնի՝ դիտարկելով ծրագրի այլընտրանքային նախագծման բոլոր կենսունակ տարբերակները» (պարագրաֆ 2ա):

Քաղաքականության այս հիմնարար նպատակն արտահայտում է այն համոզմունքը, որ վերաբնակեցումը կարող է չափազանց վնասակար լինել մարդկանց և համայնքների համար: :

220կՎ Հրագրան-Շինուհայր ՕԷԳ-ի համար նվազագույնը երեք հենարանների տեղակայման վայրերում (տես Հատված **Ошибка! Источник ссылки не найден.**) կատարվել է բնակեցված տարածքների շրջանցման/հին ԱԳ-ի օգտագործման ընտրություն վերաբնակեցումից խուսափելու համար: Վճռական է 110կՎ Լալվար և Նոյեմբերյան էլեկտրահաղորդման գծերի համար նույնպես հետևել այս սկզբունքին վերջնական նախագծման և էլեկտրահաղորդման գծի վերակառուցման ժամանակ: Այս ազդեցության գնահատումը (ԲՄԱԳ/ԲՄԿՊ) և ՎՔՇ-ում նշված առաջարկություններն արված են այս այլընտրանքի համար:

Երբ վերաբնակեցումն անխուսափելի է, պետք է պատրաստել Վերաբնակեցման գործողությունների պլան (ՎԳՊ)՝ հասցեագրելու հողի ձեռքբերման, փոխհատուցման (օրինակ՝ բերքի վնասում) և վերաբնակեցման խնդիրները՝ օժանդակելով ծրագրի ազդեցության կրողներին պահպանել կամ բարձրացնել իրենց կենսամակարդակը մինչև ծրագրի սկիզբն ունեցած մակարդակի: Մա կարևորվում է, քանի որ ծրագրի ազդեցության կրող ոչ մի անձի բարեկեցության մակարդակը ծրագրի հետևանքով չպետք է նվազի:

Լալվար/Նոյեմբերյան 110կՎ ՕԷԳ-ների համար ֆիզիկական վերաբնակեցումից կարելի է լիովին խուսափել օպտիմալացնելով տեխնիկական նախագիծը: Եթադրվում է, որ ծրագիրը պատկանում է Բ կատեգորիային, այնուամենայնիվ վերջնական նախագիծը դեռ առկա չէ այս գնահատումը հաստատելու համար:

Փոխհատուցում կպահանջվի.

- Հողաչափման աշխատանքների ժամանակ մշակաբույսերին/ծառերին հասցված վնասի դեպքում:
- Մոտեցման ճանապարհների կառուցման ժամանակ մշակաբույսերին/ծառերին հասցված վնասի դեպքում:
- Հենասյունների մոնտաժման նախապատրաստման և էլեկտրահաղորդման լարերի անցկացման ժամանակ մշակաբույսերի վնասման դեպքում:
- Հողերի համար, որոնք անհրաժեշտ կլինեն ժամանակավոր մոտեցման ճանապարհների համար
- Հողերի ձեռքբերում անհրաժեշտ կլինի հենարանի հիմքեր կառուցելու, նոր մոտեցման ճանապարհների և Նոյեմբերյան ենթակայանի մոտ (200-300մ<sup>2</sup>) լրացուցիչ սարքավորումների համար
- Կառուցապատման նպատակով հողի կատեգորիան կփոխվի գյուղատնտեսական նշանակության հողի (գումարած լրացուցիչ փոխհատուցում սեփականատիրոջ համար)
- ԱԳ-ից վերաբնակեցված տների համար կլինի ապրելակերպի լրիվ վերականգնում

Անվտանգության գոտում հնարավոր կլինի իրականացնել գյուղատնտեսական գործունեություն (բարձրության սահմանափակումներով) և կենդանիների արածում,

բացառությամբ հոողակտորների այն հատվածների, որոնց վրա կառուցվելու են հենարանների հիմքերը:

Երբ վերաբնակեցումն անխուսափելի է, պետք է պատրաստել Վերաբնակեցման գործողությունների պլան (ՎԳՊ)՝ հողի ձեռքբերման, փոխհատուցման (օրինակ՝ մշակաբույսերի վնասում) և վերաբնակեցման խնդիրները ներառելու համար՝ օժանդակելով ԱԵԱ-ց պահպանելու կամ բարձրացնելու իրենց կենսամակարդակը առնվազն մինչև ծրագրի սկիզբն ունեցած մակարդակի, քանի որ ոչ մի ԱԵԱ բարեկեցության մակարդակը ծրագրի հետևանքով չպետք է նվազի:

ԱԵԱ-ց հետ խորհրդակցությունները, վերաբնակեցմանը վերաբերող տեղեկատվության հանրամատչելիությունը չեն սահմանափակվի պետական գերակա շահի սկզբունքով հողի ձեռքբերման մասին Կառավարության որոշման ընդունումով: Փոխհատուցման և Վերաբնակեցման Գործողությունների Պլանը (ՎԳՊ) կիրառարակվի հայերեն լեզվով: Ժամանակին իրականացված ծանուցումը, պլանավորվող վերաբնակեցման խնդիրների ժամանակին հրապարակումը և առկա տարբերակների միջև ընտրությունը մարդկային արժանապատվության հարց է, որը չպետք է ոտնահարվի սույն Ծրագրի շրջանակներում: Հանրային քննարկումների և հրապարակման պլանը (ՀՔՀՊ) կպատրաստվի ՎԳՊ նախնական փուլում: Հանրային քննարկումները կապահովի ինչպես անմիջականորեն ազդեցության ենթարկված բնակիչների, այնպես էլ համայնքային ներկայացուցիչների համընդհանուր մասնակցությունը, և կբարձրացնի հանրային գիտակցության մակարդակը՝ բողոքարկման մեխանիզմի, հողատարածքների օրինականացման գործընթացների և այլ իրավական աջակցության առումով: Հանրային քննարկումները պետք է համապատասխանեն Օրհուսի Կոնվենցիայի պահանջներին, մասնավորապես հողված 6-ին (տես նաև ԲՄԱԳ, Հատված 3.1):

Գյուղական վայրերի բնակիչները, հատկապես աղքատները, հաճախ չունեն հողի և բնակելի տարածքների նկատմամբ իրենց իրավունքները հաստատող փաստաթղթեր, քանի որ նրանք հաճախ բավարարվում են ավանդական օգտագործման իրավունքով կամ երբեք չեն դիտարկել սեփականաշնորհման հնարավորությունները: ԳՔ 4.12-ը նրանց հավասարեցնում է հողի նկատմամբ օրենքով գրանցված իրավունքներ ունեցողներին: Հողի նկատմամբ գրանցված իրավունքներ կամ այլ հիմնավորող փաստաթղթեր չունեցող (ոչ օրինական հիմքերով հողի վրա բնակվողները կամ այն օգտագործողները) ԱԵԱ քաղաքացիները հողի դիմաց կստանան դրամական փոխհատուցում և ծրագրի իրականացումից նրանց պատճառված վնասներն ամբողջությամբ կփոխհատուցվեն: Տների կորստի դեպքում (օրինակ՝ ոչ օրինական հիմքերով ազատ հողակտորների վրա բնակվողները) ծրագրի ազդեցության կրողները կստանան վերաբնակեցման ամբողջական փաթեթ, քանի որ կամրագրվի նրանց խոցելիությունը: Խոցելի խմբերը և ծրագրից մեծապես տուժող անձինք կստանան հատուկ օժանդակություն:

Բնակիչների մարդահամարը և ակտիվների գնահատման մեթոդները կարող են երկակի մեկնաբանությունների տեղիք տալ կամ պարունակել սխալներ, հողի սեփականատերերը կարող է չհասկանան իրավական ընթացակարգերը և չընկալեն պետական գերակա շահի սկզբունքը և այլն: Հնարավոր հակամարտությունների և բողոքների պատճառները բազմաթիվ են: Անմիջապես դատարան դիմելու փոխարեն, պետք է սահմանել բողոքների կարգավորման մեխանիզմներ, որոնք կօգնեն արագ

կարգավորել վիճալի հարցերը և այսպիսով ստեղծել հնարավորություններ ԱԵԱ-ց համար, որոնք չունեն դատարանների հետ առնչվելու փորձ կամ դատական համակարգին չեն վստահում: Այս ամենը հաշվի առնելով՝ կսահմանվեն բողոքների կարգավորման համապատասխան մեխանիզմներ, որոնք մատչելի կլինեն ԱԵԱ-ց համար: Բողոքների մշտադիտարկման ուսումնասիրությունը մեկ փաստաթղթում կամփոփի վերաբնակեցման դրույթները:

## 2.5 Վերաբնակեցման շրջանակը ծրագրի ներքո

Էլեկտրահաղորդման գծրի կառուցման նպատակով պարտադրված վերաբնակեցման տեսանկյունից դիտարկվել են ծրագրի չորս տարբերակներ: Հողի ձեռքբերումը հենասյունների կառուցման և բնակելի շինությունների տեղահանումը /տնային տնտեսությունների վերաբնակեցումը Վերաբնակեցման քաղաքականության սույն շրջանակի հիմնական սոցիալական խնդիրներն են:

Ա) Հրագրան – Շինուհայր 220 կՎ էլեկտրահաղորդման գիծ

*1-ին տարբերակ:* Հին օտարման շերտի օգտագործում և գործող գծի հին հենասյունների օգտագործում նոր էլեկտրահաղորդման լարերի անցկացման համարն: Այս տարբերակի դեպքում հողի ձեռքբերման և մարդկանց վերաբնակեցման անհրաժեշտությունը կհասցվի նվազագույնի, քանի որ հենասյունների ներկայիս հիմքերի տակի հողերը պետական սեփականություն են և գործող օտարման շերտում առկա են սահմանափակ թվով բնակավայրեր: Որոշ դեպքերում օտարման գոտում կառուցվել են նոր շինություններ՝ հիմնականում պահեստներ և ախոռներ, իսկ որոշ դեպքերում էլեկտրահաղորդման լարերի տակ տներ են կառուցվել: Սակայն տեխնիկական պատճառներից ելնելով (էլեկտրաէներգիայի երկարատև անջատումներ, էլեկտրական ցանցի կայունության խնդիրներ)՝ 1-ին տարբերակը չի ընտրվել:

*2-րդ տարբերակ:* «Գծի փոխարինում գործող օտարման շերտին զուգահեռ (50 մետր հեռավորության վրա): Այս տարբերակն ենթադրում է գործող գծին զուգահեռ նորի կառուցում: Հենասյունների հիմքերի կառուցման համար կպահանջվի մասամբ մասնավոր սեփականություն հանդիսացող հողակտորների ձեռքբերում: Բնակավայրերի վրա ազդեցությունը մեծ կլինի, քանի որ գիծը կհատի քաղաքային և գյուղական բնակավայրեր, որտեղ բնակելի շինությունները ներկայիս օտարման շերտից նվազագույն հեռավորությունը վրա են գտնվում: Այս տարբերակի դեպքում, անհրաժեշտ կլինի տեղահանել մոտ 100 տնային տնտեսություն, ներառյալ բազմաբնակարան շենքերի բնակիչներին: Հաշվի առնելով սոցիալական հետևանքները՝ այս տարբերակը նույնպես չի ընտրվել:

*3-րդ տարբերակ:* «Գծի փոխարինում նորով հին օտարման շերտից 50 մետր հեռավորության վրա և լրացուցիչ հատվածների կառուցում բնակավայրերը շրջանցելու համար, ինչպես նաև առնվազն երեք տեղանքներում հին միջանցքի/գործող հենասյունների հիմքերի օգտագործում (երկուսը՝ Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքում և մեկը՝ Վայոց Ձորի մարզում)»: Հենասյունների հիմքերի շինարարության համար կպահանջվի մասնավոր սեփականություն հանդիսացող հողակտորների ձեռքբերում:



Այս տարբերակն ընտրվել է տնային տնտեսությունների տեղահանումից խուսափելու համար, սակայն գծի աշխատանքային նախագիծը դեռ պատրաստ չէ: Զգուշավոր նախագծման դեպքում գծի կառուցման ժամանակ հնարավոր կլինի խուսափել բնակիչների տեղահանումից: Եթե դիտարկվող բոլոր շրջանցումները կառուցվեն, ապա վերաբնակեցումից հնարավոր կլինի ամբողջությամբ խուսափել: Թերևս, ծրագրի տեխնիկական իրագործումը հնարավոր է, որ ազդի որոշ տնային տնտեսությունների վրա: Ներկայումս աշխատանքային նախագծերը դեռ պատրաստ չեն և մեր գնահատականներով կարող է առաջանալ մոտ 20 տնային տնտեսությունների վերաբնակեցման խնդիր: Հին գիծը պետք է ապամոնտաժվի, այլ ոչ թե շարունակի կանգուն մնալ և ծառայել որպես պահեստամասերի աղբյուր: 3-րդ տարբերակը նախընտրելի է:

*4-րդ տարբերակ:* 220 կՎ գծի վերականգնում չի իրականացվում (ծրագիր չի իրականացվում): Այս դեպքում վերաբնակեցման խնդիրներ չեն առաջանա:

Բ) 110կՎ Լավվար/Նոյեմբերյան ՕԷԳ

Լավվար և Նոյեմբերյան գիծը փոխարինելու համար նոր երկշղթա 110կՎ գիծ կկառուցվի զուգահեռ նոր միջանցքում: Հտագայում հին չօգտագործված գծերը և հենարանները պետք է ապամոնտաժվեն և արդյունավետ ապամոնտաժումը պետք է մշտադիտարկվի: Շատ դեպքերում վերաբնակեցման ազդեցությունները պետք է սահմանափակվեն հողի ձևով և բերամար և անհանգստություն պատճառելու համար փոխհատուցմամբ: Այնուամենայնիվ, սպասվում են որոշ ֆիզիկական վերաբնակեցում, մասնավորապես Հաղպատ գյուղում 3 տուն և Նեղոց գյուղում մոտավորապես 8 տուն, եթե ներկա գծի ծրագիծն իրագործվի: Այլընտրանքերը առաջարկված են ԲՄԱԳ-ում:

Ընդհանուր առմամբ ենթադրվում է, որ ծրագիրը կունենա սահմանափակ վերաբնակեցման ազդեցություն: Այնուամենայնիվ, քանի որ մանրամասն նախագիծն առկա չէ, չի բացառվում, որ որոշ տների վերաբնակեցման անհրաժեշտություն կլինի գծի միջանցքից անվտանգության հեռավորության բացակայության պատճառով: Ինչպես նաև հողի ձևով և բերամար անհրաժեշտություն կարող է առաջանալ հենարանների հիմքերի համար, որոնք պետք է փոխվեն վերաբնակեցումից խուսափելու համար: Համաձայն պահանջների, (համառոտ) ՎԳՊ պետք է կազմվի ծրագրի վերջնական նախագիծն ավարտելուց հետո:

Գ) Հաղթանակ, Չարենցավան-3 և Վանաձոր-1 ենթակայանների հիմնանորոգումը/ ընդարձակումը չի դառնա հողերի ձևով և տնային տնտեսությունների տեղահանման պատճառ, քանի որ ծրագրավորվող աշխատանքները կատարվելու են ենթակայանների տարածքների սահմաններում, և բոլոր ազդեցությունները սահմանափակված են լինելու ենթակայանների տարածքներով:

### 3. Ինստիտուցիոնալ և իրավական դաշտ

#### 3.1 Ինստիտուցիոնալ դաշտ

ԲԷՑ ՓԲԸ-ն 1998թ.-ին հիմնադրված պետական սեփականություն հանդիսացող ընկերություն է, որը պատասխանատու է բարձրավոլտ ցանցերի շահագործման, շինարարության և պահպանման համար: Ծրագրի բարձրավոլտ գծի վերականգնման բաղադրիչի իրականացումը, ինչպես նաև ԲԷՑ-ի ընդհանուր գործունեությունը վերահսկում է ընկերության կառավարման խորհուրդը, որը նախագահում է Էներգետիկայի և բնական պաշարների նախարարը և որն ունի ԲԷՑ-ը, Կառավարությունը և Էներգետիկայի ոլորտի ընկերությունները ներկայացնող ութ անդամներ:

ԲԷՑ-ի հիմնադրման իրավական հիմքը՝ Կառավարության 1998թ.-ի հուլիսի 20-ի N 450 որոշումն է: ԲԷՑ-ը վերակազմավորվել է որպես փակ բաժնետիրական ընկերություն 1998թ.-ի օգոստոսի 21-ին: ԲԷՑ-ի կանոնադրությունը հաստատվել է ՀՀ Էներգետիկայի նախարարության 1998թ.-ի օգոստոսի 14-ի N 254-GM որոշմամբ: ԲԷՑ-ի միակ բաժնետերը ՀՀ Կառավարությունն է: Ըստ ՀՀ Կառավարության 2003թ.-ի նոյեմբերի 6-ի որոշման՝ ԲԷՑ ՓԲԸ բաժնետոմսերի կառավարումը հանձնարարված է ՀՀ Էներգետիկայի նախարարությանը:

ԲԷՑ-ի հիմնական գործառույթներն են՝

- Էլեկտրաէներգիայի փոխադրում,
- Էլեկտրաէներգիայի արտադրություն (հողմային էլեկտրակայան),
- Էներգետիկ օբյեկտների շինարարություն, վերակառուցում, արդիականացում և վերականգնում,
- Բարձրավոլտ էլեկտրացանցերի կառուցում,
- Էներգետիկ օբյեկտների գիտահետազոտական և փորձարարական ստրուկտուրական աշխատանքներ:

#### Գործառնական սկզբունքները

Համաձայն Էներգետիկայի մասին օրենքի 23-րդ հոդվածի (Էներգետիկայի ոլորտում գործունեության լիցենզավորում)՝ էլեկտրաէներգիայի հաղորդումը, ինչպես նաև հաղորդման ցանցերի կառուցումը, լիցենզավորվող գործունեության տեսակ է: Միայն Էներգետիկայի մասին օրենքի պահանջներին համապատասխանող գործունեության լիցենզիա ունեցող անձինք կարող են զբաղվել էլեկտրական և ջերմային էներգիայի, ինչպես նաև գազի առքուվաճառքի (գնում վերավաճառքի նպատակով) գործունեությամբ՝ համաձայն լիցենզիայի պայմանների և շուկայական կանոնների:

Բացի այդ, համաձայն Էներգետիկայի մասին օրենքի 36-րդ հոդվածի (փոխադրման/հաղորդման լիցենզիաներ)՝ էլեկտրաէներգիայի հաղորդման լիցենզիա ունեցող անձին տրվում է Հայաստանի Հանրապետության տարածքով էլեկտրական էներգիայի (հզորության) հաղորդման ծառայություն իրականացնելու և Հայաստանի Հանրապետության տարածքով երրորդ երկրներ էլեկտրական էներգիա (հզորություն) տարանցնելու իրավունք: Էլեկտրական էներգիայի (հզորության) հաղորդման լիցենզիա



ԲԷՑ-ի սոցիալական մասնագետի օգնությամբ ԲԷՑ-ի կողմից կարող են կատարվել ՎՔՇ-ի առաջարկությունների թարմացման և (ամփոփ) Վերաբնակեցման Գործողության Պլանի (ՎԳՊ) կազմման (այսինքն մարդահամար, կորուստների մանրամասն գույքագրում, սոցիալ-տնտեսական ուսումնասիրություն, հանրային քննարկումներ և հրապարակում) առաջադրանքը ՎԳՊ-ի իրականացման համար որոշ լրացուցիչ խորհրդատվական աջակցությամբ:

### **Այլ շահագրգիռ կողմեր.**

ՀՀ Կառավարության և ՀՀ հասարակական կազմակերպությունների հետ մեկտեղ Ծրագրի շահագրգիռ կողմերն են.

### **ՀՀ Կառավարություն.**

- Էներգետիկայի և Բնական Պաշարների Նախարարություն
- Բնապահպանության Նախարարություն`
- Հատուկ պահպանվող տարածքների վարչություն
- «Բնապահպանական փորձաքննություն» ՊՈԱԿ
- Գյուղատնտեսության Նախարարություն`
- «Հայանտառ» ՊՈԱԿ (անտառ)
- Մշակույթի Նախարարություն`
- Մշակութային ժառանգության և մշակութային արժեքների վարչություն
- ՀՀ Կառավարության Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե (Պետական Կոմիտե)

### **Տեղական կառավարման մարմինները**

- Գեղարքունիքի, Վայոց Ձորի և Սյունիքի մարզի կադաստրի տեղական գրասենյակները,
- Գեղարքունիքի, Վայոց Ձորի և Սյունիքի մարզի բնապահպանական վարչությունները,
- Գեղարքունիքի, Վայոց Ձորի և Սյունիքի մարզի հուշարձանների պահպանման վարչությունները,
- Սևանի ազգային պարկ ՊՈԱԿ-ը:

### **Համալսարաններ/հետազոտական ինստիտուտները**

- Հայաստանի ամերիկյան համալսարան (ՀԱՀ), ՀԱՀ բնապահպանության Ակոսյան կենտրոն,
- ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա, Հնագիտության և էթնոգրաֆիայի ինստիտուտ:

### **Հասարակական կազմակերպությունները**

- Վայրի բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան ներկայացուցչություն,
- Կանանց ռեսուրսների կենտրոն,
- Բարձրագույն կրթությամբ կանանց ասոցիացիա:

Տարածաշրջանային բնապահպանական կենտրոնի 2007թ.-ի տարածաշրջանային հաշվետվություններից առանձնացվել են նաև հետևյալ ՀԿ-ը.

#### **Գեղարքունիքի մարզ`**

- Գեղարքունիքի մարզի ազգային փոքրամասնությունների և կանանց «Բարեկամություն» խորհուրդ ՀԿ,
- Մարտունիի կանանց հանրային խորհուրդ,
- Հայաստանյան Կարմիր խաչի Գեղարքունիքի տարածքային մասնաձյուղ,
- Մարդկային և բնապահպանական դատապաշտպանության/իրավական խորհրդատվության «Երկիր մոլորակ» ՀԿ,
- Մարտունու «Տաթն» ՀԿ,
- «Կապուտաչյա Սևան» ՀԿ,
- «Արեգունի» ՀԿ,
- «Գեղամա» երիտասարդների տարածքային ասոցիացիա ՀԿ:

#### **Վայոց Ձորի մարզ`**

- Վայոց Ձորի մարզի կանանց տարածքային խորհուրդ, Եղեգնաձոր,
- Բուսաբուծության և անասնապահության գյուղատնտեսական համակարգեր,
- Հասարակական զարգացման օժանդակության Հրաչյա Մկրտչյանի «Շող» ՀԿ,
- «Սպառողների շահերի պաշտպանության» կենտրոն,
- Վայոց Ձորի մարզի երիտասարդական կենտրոն,
- Հայաստանի կանաչների մշտական Վայքի մասնաձյուղ, քաղաք Վայք,
- «Առողջ ընտանիք» ՀԿ, գյուղ Շատին:

#### **Սյունիքի մարզ`**

- «Պերաս» բնապահպանական ՀԿ,
- «Բնապահպան էկոլոգների ակումբ» բնապահպանական ՀԿ,
- «ԻՏԵԿ» ՀԿ,
- «ԳԵԱ» բնապահպանական ՀԿ,
- «ԼԱՍ» ՀԿ,
- «Էկոսիս» բնապահպանական ՀԿ,
- «Հազարամյակի զարգացման սոցիալական ֆոնդ» հիմնադրամ:

#### **Լոռու մարզ`**

- Օրհուս Կենտրոն Լոռիի մասնաձյուղ և անդամ ՀԿ-ներ

#### **Շինարար Կապալառու`**

Շինարար Կապալառուն պատասխանատու է հետևյալի համար.

- Թարմացնել ՎԳՊ-ն (համաձայնեցնելով ԲԷՑ-ի հետ) ցանկացած փոփոխությունների համար, որոնք կկատարվեն վերջնական նախագծման ընթացքում:
- Իրականացնել ՎԳՊ/ՎՔՇ-ի դրույթները փոփոխությունների և ազդեցությունների պատճառով, որոնք առաջանում են նախաշինարարական և շինարարական գործընթացի ժամանակ` կապված անհանգստություն պատճառելու հետ և

փոխհատուցումները վճարելու արդյունքում, ինչպես նաև գյուղատնտեսական տարածքներում շինարարություն իրականացելու ժամանակ (նվազագույնի հասցնել մշակաբույսերի վնասումը), ի լրումն ԲՄԿՊ-ի իրականացման և այլն:

- Իրականացնել և գործի դնել բողոքների կարգավորման մեխանիզմը ԲԷՑ-ի հետ համաձայնեցնելով: Խոցելի ԱԵԱ-ց իրավական ծառայությունների տրամադրում ՀԿ-ների (օր. Օրհուս Կենտրոն)/ անկախ իրավաբանների միջոցով:
- Շարունակական Հանրային Քննարկումների իրականացում մինչև ֆիզիկական աշխատանքները և դրանց ընթացքում:

Ազգային և մարզային շահագրգիռ կողմերի ընտրությունը կատարվել է ԲՄԱԳ/ՎՔՇ և խորհրդատվական սեմինարների համար:

### Հիմնական մասնակիցների ցուցակը.

h/h	Մասնակից	Դերը/Պարտականությունը
1	ԲԷՑ	Ծրագրի նախապատրաստման, իրականացման և փոխհատուցման հետ կապված բոլոր ֆինանսական պարտականությունները և վերաբնակեցման գործընթացը, հանրային քննարկումների կազմակերպման, փորձագետների հրավիրման հետ կապված բոլոր գործառույթները: ԲԷՑ-ի սոցիալական և բնապահպանական ոլորտի միավորը/ՀՀԻ ստորաբաժանումը կհամակարգի ՎԳՊ-ի իրականացումը:
2	Բնապահպանության Նախարարություն/ Բնապահպանական պետական տեսչություն	Վերահսկող Խորհրդի անդամ. Վերահսկում է շինարարական գործողությունների համապատասխանությունը բնապահպանական նորմերին
3	«Բնապահպանական փորձաքննություն» ՊՈԱԿ	Ապահովում է շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության անցկացումը և տալիս եզրակացություն
4	Էներգետիկայի և Բնական Պաշարների Նախարարություն	Վերահսկող Խորհրդի անդամ
5	Ֆինանսների Նախարարություն	Ապահովում է Ծրագրի իրականացման բյուջեն
6	Գյուղատնտեսության Նախարարություն/ «Հայանտառ» ՊՈԱԿ	Խորհրդատվություն է տրամադրում անտառի վերատնկման և խնամքի հետ կապված հարցերի շուրջ
7	Մշակույթի Նախարարություն/ Հուշարձանների պահպանության	Ուղեկցում է նախագծող աշխատանքային խմբին՝ համոզվելու, որ մշակութային ժառանգություն հանդիսացող հատվածները շրջանցված են

h/h	Մասնակից	Դերը/Պարտականությունը
	վարչություն	
8	ՀՀ ԿԱ Անշարժ Գույքի Կադաստրի Պետական Կոմիտե	Պատասխանատու է անշարժ գույքի կարգավիճակի վերաբերյալ տեղեկատվության տրամադրման համար և դեկավարում է սեփականության պետական գրանցման գործընթացը
9	Տեղական դատարաններ	Ուսումնասիրում է հողի օտարման դեպքերը, անցկացնում լսումներ և կատարում որոշումների ընդունում՝ հողի օտարման հնարավորության և գնի վերաբերյալ
10	Գույքի Անկախ Գնահատողներ	Հավատարմագրված մասնավոր ընկերություններ, որոնց վարձակալում են՝ գնահատելու գույքին հասցված վնասի չափը
11	Ազդակիր բոլոր գյուղերի համայնքների ղեկավարներ	Ուղեկցում են նախագծող խմբին՝ որոշելու բնակավայրերի շրջանցումները
12	ՀԿ-ներ (օրինակ՝ ԲՀՀ, Հասարակական և Բնապահպանական ասոցիացիան, մարզային ՀԿ-ներ, Օրհուսի Կետրոնները)	Խորհրդատվության մատուցում ԱԵԱ-ց աջակցություն բնապահպանական հարցերում; Մասնակցություն Հանրային քննարկումներին
13	Կանանց կազմակերպություններ/ Կանանց Մարզային Խորհուրդներ	Խորհրդատվական աջակցություն ՎԳՊ-ին և կանանցից բաղկացած ազդեցության ենթարկված տնտեսություններին
14	Սոցիալական աշխատողներ/ Իրավաբաններ	Աջակցություն ազդեցության ենթարկված տնտեսություններին/ չգրանցված սեփականություն ունեցող անձանց աջակցություն օրինականացման գործընթացում
15	Համաշխարհային Բանկ	Անվտանգության միջոցառումների մշտադիտարկում. ծրագրի վերահսկողություն, ՎԳՊ-ի նախաձեռնում և ստուգում, պայմանագրային հատուցումների հստակեցում և Ծրագրի շինարարական աշխատանքների նախաձեռնում
16	ՎԳՊ-ն Մշտադիտարկող Խորհրդատու	ՎԳՊ-ն մշտադիտարկող խորհրդատուն պատասխանատու կլինի ՎԳՊ-ի կազմման, իրականացման, Համատեղության Հաշվետվության կազմման համար յուրաքանչյուր ՎԳՊ-ի համար, որը կկազմվի այս ծրագրի ներքո, համաձայն ՎՔՇ-ի:
17	Շինարար Կապալառու	Թարմացնել ՎԳՊ-ն (համաձայնեցնելով ԲԷՑ-ի հետ) ցանկացած փոփոխությունների

h/h	Մասնակից	Դերը/Պարտականությունը
		<p>համար, որոնք կկատարվեն վերջնական նախագծման ընթացքում:</p> <p>Իրականացնել ՎԳՊ/ՎՔՇ-ի դրույթները փոփոխությունների և ազդեցությունների պատճառով, որոնք առաջանում են նախաշինարարական և շինարարական գործընթացի ժամանակ՝ կապված անհանգստություն պատճառելու հետ և փոխհատուցումները վճարելու արդյունքում, ինչպես նաև գյուղատնտեսական տարածքներում շինարարություն իրականացելու ժամանակ (նվազագույնի հասցնել մշակաբույսերի վնասումը), ի լրումն ՇՄՄԿՊ-ի իրականացման և այլն:</p> <p>Իրականացնել և գործի դնել բողոքների կարգավորման մեխանիզմը ԲԷՑ-ի հետ համաձայնեցնելով:</p> <p>Շարունակական Հանրային Քննարկումների իրականացում մինչև ֆիզիկական աշխատանքները և դրանց ընթացքում:</p>

### 3.2 Օրենսդրական դաշտ

Հայաստանում հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարումը կարգավորվում է ՀՀ Սահմանադրությամբ, «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքով և այլ իրավական ակտերով: Համաձայն ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի երրորդ կետի՝ սեփականության օտարումը հասարակության և պետության կարիքների համար կարող է կատարվել միայն բացառիկ՝ գերակա հանրային շահերի դեպքերում, օրենքով սահմանված կարգով, նախնական համարժեք փոխհատուցմամբ: Հասարակության և պետության շահի համար սեփականության օտարման սահմանադրական հիմքը գերակա հանրային շահն է:

Հասարակության և պետության շահի համար սեփականության օտարման սահմանադրական նախապայմաններն են.

- ա) Օտարումը պետք է կատարվի օրենքով սահմանված կարգով:
- բ) Օտարված սեփականության դիմաց համարժեք փոխհատուցում պետք է տրամադրվի նախապես:

«Հասարակության և պետության շահի համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքը սահմանում է հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման հիմքը, կարգը, օտարվող սեփականության դիմաց փոխհատուցման տրման կարգը, բացառիկ՝ գերակա հանրային շահի հասկացության և դրա որոշման կարգը: Սույն օրենքի գործողությունը տարածվում է ֆիզիկական և



իրավաբանական անձանց, ինչպես նաև համայնքներին (այսուհետ՝ սեփականատերեր) սեփականության իրավունքով պատկանող և Հայաստանի Հանրապետությունում գտնվող կամ Հայաստանի Հանրապետությունում օրենքով սահմանված կարգով պետական գրանցում ստացած կամ հաշվառված սեփականության իրավունքի բոլոր օբյեկտների (անշարժ կամ շարժական գույք, գույքային իրավունքներ, արժեթղթեր և այլն) վրա (այսուհետ՝ օտարվող սեփականություն): Մույն օրենքը չի տարածվում ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ, արտակարգ իրավիճակների պայմաններում սեփականության օտարման հարաբերությունների վրա:

Գերակա հանրային շահը կարող է հետապնդել հետևյալ նպատակները՝ պետության պաշտպանության, պետության ու հասարակության անվտանգության ապահովումը; էներգետիկայի, հեռահաղորդակցության, ջրամատակարարման, ջրահեռացման, ջերմամատակարարման, քաղաքաշինական, ընդերքի հետախուզման, ընդերքօգտագործման, տրանսպորտի, հաղորդակցության ուղիների կամ բնակավայրերի ենթակառուցվածքների զարգացման բնագավառում համապետական կամ համայնքային կամ միջհամայնքային կարևոր նշանակություն ունեցող ծրագրերի իրականացման ապահովումը; շրջակա միջավայրի պահպանության ապահովումը:

ՀՀ հողային օրենսգիրքի 66-րդ հոդվածի համաձայն՝ պետության և համայնքների սեփականություն հանդիսացող հողերը կարող են օտարվել էլեկտրական էներգիայի բաշխման լիցենզիա ունեցող անձանց՝ էլեկտրական էներգիայի բաշխման կամ մատակարարման համակարգերի նախագծով նախատեսված շենքերի, շինությունների կամ այլ օժանդակ կառույցների կառուցման համար հողամասերի տրամադրման դեպքում: Հողերը կարող են օտարվել ԲԷՑ-ին միայն համայնքի կողմից դրա կատեգորիան էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների կատեգորիա փոխելուց հետո: Այդ դեպքում հողերը կօտարվեն էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների կատեգորիայի հողերի կադաստրային արժեքով:

«Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին» ՀՀ օրենքն ընդունվել է 2005թ.-ին: Մույն օրենքը սահմանում է անշարժ գույքի գնահատման գործունեության իրականացման հիմունքները և կանոնակարգում անշարժ գույքի գնահատման գործունեության հետ կապված հարաբերությունները: Օրենքի 6-րդ հոդվածը սահմանում է անշարժ գույքի գնահատման օբյեկտները:

Համաձայն օրենքի 8-րդ հոդվածի՝ հետևյալ դեպքերը հանդիսանում են անշարժ գույքի գնահատման պարտադիր դեպքեր՝

ա) Պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքի օտարման դեպքերում, բացառությամբ պետական գույքի մասնավորեցման և պետական կամ համայնքային հողերի օտարման դեպքերի:

բ) Անշարժ գույքի պետության կամ համայնքների կարիքների համար ձեռք բերելու դեպքերում:

գ) Աշարժ գույքն իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում կամ հիմնադրամներում ներդնելու դեպքերում:

դ) Անշարժ գույքի բռնագանձման հետևանքով իրացման դեպքերում:

ե) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ դեպքերում:

Անշարժ գույքի գնահատման գործունեությունն եթակա է լիցենզավորման (հոդված 9): Անշարժ գույքի գնահատման գործունեությունն իրականացվում է իրաբանական և ֆիզիկական անձանց կողմից՝ ըստ ՀՀ «Լիցենզավորման մասին» օրենքի պահանջների անշարժ գույքի գնահատման լիցենզիա ստանալուց հետո:

**3.3 ՀՀ օրենսդրության և Համաշխարհային բանկի պարտադրված վերաբնակեցման քաղաքականության համեմատություն**

	Հայաստանի Օրենքներ և Նորմեր Կիրառվել է ՀՊՇՍՕ օրենքը (տես նաև 3.2)	Համաշխարհային Բանկի ուղեցույցներ ԳՔ 4.12	Կիրառող համակարգը
Հողի սեփականատերեր	Հողի փոխհատուցում տրվում է միայն հողի նկատմամբ օրինական իրավունքներ ունեցողներին	Առաջարկում է կիրառել հողը մեկ այլ հողով փոխհատուցման տարբերակը: Բոլոր մյուս ակտիվների փոխհատուցումը կատարվում է փոխարինման արժեքով	ՀԲ ուղեցույցներ ԳՔ 4.12
Հողօգտագործողներ	Հողի փոխհատուցում տրվում է միայն գրանցված հողօգտագործողներին	Հողի նկատմամբ իրավունքների բացակայությունը փոխհատուցման տրամադրման արգելք չէ: Հողի նկատմամբ իրավունք չունեցող օգտագործողները նույնպես փոխհատուցվում են՝ անկախ հողի օգտագործման իրավական կարգավիճակից:	ՀԲ ուղեցույցներ ԳՔ 4.12
Հողօգտագործողներ	Մշակաբույսերի կորստի փոխհատուցում տրամադրվում է միայն գրանցված օգտագործողներին (սեփականատերեր և վարձակալներ)	Բոլոր հողօգտագործողները (օրինական կամ անօրինական) իրավունք ունեն փոխհատուցում ստանալ կորցված մշակաբույսերի դիմաց, կարող են փոխհատուցվել այլ հողակտորով և եկամուտը պետք է վերականգնվի առնվազն մինչ ծրագրի սկիզբը եղած մակարդակը	ՀԲ ուղեցույցներ ԳՔ 4.12

	Հայաստանի Օրենքներ և Նորմեր Կիրառվել է ՀՊՇՍՕ օրենքը (տես նաև 3.2)	Համաշխարհային Բանկի ուղեցույցներ ԳՔ 4.12	Կիրառող համակարգը
Տներ և այլ շինություններ	Ծրագրի կողմից տներին/շինություններին հասցված վնասը փոխհատուցվում է, բացառությամբ չգրանցված առևտրային նշանակության շինությունների	Համաշխարհային բանկի քաղաքականությունը փոխհատուցում է նախատեսում նաև առևտրային նշանակության չգրանցված շինությունների համար	ՀԲ ուղեցույցներ ԳՔ 4.12
Հողի գնահատում	Հողի արժեքը գնահատվում է ըստ գործող շուկայական գների գումարած 15 % գնահատված արժեքից	Հողի արժեքը որոշվում է ըստ գործող շուկայական գնի/փոխարինման արժեքի	Հայաստանի Օրենսդրություն/ ՀՊՇՍՕ օրենքը (տես նաև 3.2)
Հանրային քննարկումներ և տեղեկատվության հրապարակում	Գերակա շահ ճանաչելու վերաբերյալ օրենքը ուժի մեջ մտնելուց հետո յոթ օրվա ընթացքում պետք է ներկայացվի բոլոր օրինական սեփականատերերին: Որոշումը պետք է հրապարակվի մամուլում: Ազդեցության քանակական գնահատման, ազդեցության տնտեսական ծախսերի, փոխհատուցման ստացման իրավունքի, փոխհատուցման գումարի և ֆինանսական օժանդակության մասին տեղեկատվությունը ԱԵԱ տրամադրվում է մինչև Գերակա Հանրային Շահ ճանաչելու/Նախնական Ուսումնասիրության մասին ՀՀ Կառավարության Որոշմամբ սահմանված ժամկետը	Հանրային քննարկումները և տեղեկատվության հրապարակումն (ՀՔՏՀ) իրականացվում է ազդակիր անձանց մասնակցությամբ. ՀՔՏՀ-ի պլանը պետք է պատրաստվի ՎԳՊ-ի հետ միասին:	ՀԲ ուղեցույցներ ՕՔ 4.12 և Հայաստանի օրենսդրություն (ՀՊՇՍՕ օրենքը)

	Հայաստանի Օրենքներ և Նորմեր Կիրառվել է ՀՊՇՍՕ օրենքը (տես նաև 3.2)	Համաշխարհային Բանկի ուղեցույցներ ԳՔ 4.12	Կիրառող համակարգը
Կենսամակարդակի վերականգնում	Ոչ մի դրույթ չի պարունակում եկամուտների/դրանց աղբյուրների վերականգնման, ծրագրից խիստ տուժած ԱԵԱ-ց և խոցելի խմբերին օգնության տրամադրման կամ տեղահանման ծախսերի փոխհատուցման մասին	Համաշխարհային Բանկը պահանջում է եկամուտների մակարդակի վերականգնում ԱԵԱ-ց պատճառած շոշափելի կորուստների համար և տեղահանման ծախսերի փոխհատուցում	ՀԲ ուղեցույցներ ԳՔ 4.12
Օտարման շերտում հողի արժեքի կորուստ	Փոխհատուցում նախատեսված չէ հաղորդակարների տակ գտնվող հողի արժեքի կորստի համար (օրինակ՝ շինարարություն հնարավոր չէ)	Հողի սեփականատերեր, ում հողատարածք է հատկացվել համայնքի կողմից շինարարության համար, կստանան փոխհատուցում գնահատված արժեքի կորստի համար:	ՀԲ ուղեցույց ԳՔ 4.12

### 3.4 Օրենսդրական բացերի վերլուծություն

ՀՀ օրենսդրական դաշտի և ԳՔ 4.12-ի հիմնական տարբերությունն այն է, որ ՀՀ օրենսդրությունը փոխհատուցում նախատեսում է հողի և շինությունների գրանցված սեփականության իրավունքների առկայության դեպքում, իսկ ըստ Համաշխարհային բանկի ԳՔ 4.12-ի՝ փոխհատուցում պետք է տրամադրվի նույնիսկ գրանված իրավունքների բացակայության դեպքում: Սույն ծրագրի համար կիրառվում է Համաշխարհային բանկի ԳՔ 4.12-ը: Սա նշանակում է, որ եթե ԳՔ 4.12-ի պահանջներն ավելի խիստ են, քան ազգային օրենսդրությունը, ապա պետք է կիրառվեն ԳՔ 4.12-ի ավելի խիստ պահանջները:

Խնդիրներ են առաջանում նաև իրականացման և մշտադիտարկման մասով, քանի որ ՀՀ օրենսդրությունն այս առումով գերծ է հստակությունից և երկիմաստ է: Համաշխարհային բանկի ԳՔ 4.12-ի կիրառումը զգալիորեն տարբերվում է ՀՀ օրենքի կիրառումից: Այդ տարբերությունը նվազեցնելու համար ԲԷՑ-ը պատասխանատու կլինի ՎԳՊ պատրաստման, հանրային քննարկումներին աջակցման, բնապահպանական և սոցիալական անձնակազմի համար դասընթացներ կազմակերպելու և մշտադիտարկում իրականացնելու համար:

Արտաքին մշտադիտարկող խորհրդատուն պատասխանատու կլինի Համատեղության Հաշվետվության կազմման համար յուրաքանչյուր ՎԳՊ-ի համար, որը կկազմվի այս ծրագրի ներքո, համաձայն ՎՔՇ-ի:

## **4. Փոխհատուցման տրամադրման չափանիշները**

### **4.1 Փոխհատուցման իրավունք**

Ծրագրի շրջանակում փոխհատուցման կամ տեղահանման փոխհատուցման իրավունք ունեն հետևյալ խմբերը.

- (ա) Ծրագրի ազդեցության այն բոլոր կրողները, որոնք կորցնում են իրենց հողակտորները, որոնց նկատմամբ իրավունքները օրինական գրանցված են, գրանցված չեն, կարող են օրինական գրանցվել կամ հողակտորները օրինական կարգավիճակ չունեն:
- (բ) Հողակտորները զբաղեցնողները կամ բնավարձակալները:
- (գ) Հողի վրա գտնվող շինությունների, բերքի, բուսականության կամ այլ օբյեկտների սեփականատերերը և
- (դ) Ծրագրի ազդեցության այն կրողները, որոնք կորցնում են իրենց բիզնեսը, եկամուտները և աշխատավարձերը:

Փոխհատուցման ստացման իրավունքը սահմանափակվում է վերջնաժամկետով, որը մարդահամարի և վնասների ցուցակի կազմման մեկնարկման ամսաթիվն է: Սահմանված վերջնաժամկետից հետո նոր բնակեցում հաստատողները, ակտիվները բարելավողները և նոր գործունեություն մեկնարկողները փոխհատուցում չեն ստանա:

Ծրագրի ազդեցության կրողներին ծրագրի մեկնարկից առաջ նախնական ծանուցման միջոցով բավարար ժամանակ կտրամադրվի զբաղեցրած տարածքների ազատման համար: Ծրագրի ազդեցության կրողներին նաև կցուցաբերվի կառույցների ապամոնտաժման օժանդակություն: Բացասական ազդեցություններ առաջացնող կողմն է վճարում ակտիվների ապամոնտաժման ծախսերը, ներառյալ շարժական գույքի: Ապամոնտաժված կառույցները և նյութերը չեն բռնագրավվի և դրանց դիմաց ոչ մի տույժ, տուգանք կամ այլ պատժամիջոց չի կիրառվի:

Ծրագրի ազդեցության այն կրողները, որոնք տեղահանվում են, կստանան նոր հողակտորներ, հողի նկատմամբ իրավունքների գրանցման օժանդակություն և նոր տների կառուցման օգնություն: Ծրագրի ազդեցության կրողները կմասնակցեն իրենց տեղահանմանը վերաբերող բոլոր որոշումների կայացմանը և կունենան ընտրության հնարավորություն: Կտրամադրվի կյանքի պայմանների բարելավման փոխհատուցում, որպեսզի ծրագրի ազդեցության կրողների կենսամակարդակը վերականգնվի մինչ ծրագրի սկիզբը եղած մակարդակի և հնարավոր լինի խուսափել խոցելի սոցիալական վիճակից:

### **4.2 Փոխհատուցման իրավունքի շրջանակը**

Ծրագրի ազդեցության հետևանքով հողակտորներից, տներից և այլ շինություններից, ինչպես նաև եկամտից զրկված անձանց համար կսահմանվի հստակ շրջանակ, որը կնախատեսի փոխհատուցում հողի մշտական/ժամանակավոր կորստի, շինությունների կորստի, բերքի և ծառերի կորստի, տեղահանման, ձեռնարկատիրական գործունեության դադարեցումից առաջացած վնասի փոխհատուցում՝ հաշվարկված հիմնվելով

հարկային հաշվետվությունների վրա կամ միանվագ փոխհատուցման տրամադրում: Սույն փաստաթղթում ներկայացված փոխհատուցման շրջանակը հիմնված է տրանսպորտային ոլորտի ծրագրերի (օրինակ՝ ՀՀ Տրանսպորտի և կապի նախարարություն/ՉԱԲ, 2010թ. դեկտեմբեր) համանման փաստաթղթերի վրա, քանի որ բարձրավոլտ հաղորդման գծերի վերականգնման կամ վերանորոգման ծրագրերի մասով վերջին տարիներին նմանատիպ փաստաթղթեր չեն պատրաստվել:

ԱԿԱ –երը կարող են դասվել ստորև նշված խմբերից որևէ մեկին՝

**Ա) Օրինական սեփականատերեր**՝ անձինք, ովքեր հողի նկատմամբ ունեն ֆորմալ իրավունք (ներառյալ նախադեպային և ավանդական իրավունքները, որոնք ճանաչվում են երկրի օրենսդրությամբ)։

**Բ) Օրինականացման ենթակա ԱԿԱ-երը**՝ անձինք, ովքեր մարդահամարի մեկնարկի պահին հողի նկատմամբ ֆորմալ իրավունք չունեն, սակայն ունեն հողի կամ ակտիվի նկատմամբ ՀՀ օրենսդրությամբ ճանաչելի պահանջներ կամ այնպիսի պահանջներ, որոնք դառնում են ճանաչելի ծրագրի շրջանակներում վերաբնակեցման գործողությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ իրավական միջոցառումների իրականացման դեպքում և, որոնք բխում են օրենսդրությունից և ավանդական օգտագործումից։

**Գ) Օրինականացման ոչ ենթակա ԱԿԱ-երը**՝ անձինք, ովքեր իրենց կողմից զավթած հողի նկատմամբ չունեն ճանաչելի իրավունք կամ պահանջ։

#### **4.2.1. Հող**

Փոխհատուցման շրջանակի մանրամասները ներկայացված են ստորև.

- Գյուղատնտեսական նշանակության հողերի սեփականատերերին տրամադրվելու է (i) դրամական փոխհատուցում հողակտորի շուկայական կամ կադաստրային (որը որ ավելի մեծ է) արժեքի չափով գումարած 15 տոկոս հավելավճար: Այն դեպքերում, երբ գոյություն չունի հողերի առքուվաճառքի ակտիվ շուկա, ապա դրամական փոխհատուցումը հաշվարկվում է նույն համայնքի վարչական սահմաններում գտնվող և նույն արժեքով/արտադրողականությամբ նմանատիպ հողակտորի արժեքի հիման վրա, որն ընդունելի է ԱԿԱ-ի համար գումարած 15 տոկոս հավելավճար, կամ (ii) նույն համայնքի վարչական սահմաններում գտնվող և նույն արժեքով/արտադրողականությամբ նմանատիպ հողակտոր, որն ընդունելի է ԱԿԱ-ի համար: Այն հողակտորները, որոնք ծրագրի անուղղակի ազդեցության հետևանքով կդառնան անհասանելի կամ մշակման և այլ օգտագործման համար անպիտան, կներառվեն ազդեցության ենթարկված հողակտորների մեջ: Երբ ԱԿԱ-ի (սեփականատերեր, վարձակալներ, բնավարձակալներ) հողակտորի ավելի քան 10 տոկոսը տուժում է, ապա ծրագրի ԱԿԱ-ն կստանա ստորև նշված զգալի վնասների նպաստը (տես 24-րդ էջը): Փոխհատուցումը չի նվազեցվի գործարքի և գրանցման ծախսերով:

- Ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի սեփականատերերը կստանան՝ (i) դրամական փոխհատուցում հողակտորի շուկայական արժեքի չափով գումարած 15 տոկոս հավելվածար: (ii) Այն դեպքերում, երբ գոյություն չունի հողերի առքուվաճառքի ակտիվ շուկա, ապա՝ տեղափոխման հող՝ նույն համայնքի վարչական սահմաններում և նույն արժեքով/արտադրողականությամբ, որն ընդունելի է ԱԿԱ-ի համար կամ դրամական փոխհատուցում տեղափոխման հողի արժեքի չափով գումարած 15 տոկոս հավելվածար: Այն հողակտորները, որոնք ծրագրի անուղղակի ազդեցության հետևանքով կդառնան անհասանելի կամ մշակման և այլ օգտագործման համար անպիտան, կներառվեն ծրագրից տուժած հողակտորների մեջ: Հողերը որոնք նախատեսված են գյուղի հետագա զարգացման համար, ինչպես նաև բնակավայրային հողերը հնարավորինս կշրջանցվեն և կփոխհատուցվեն համապատասխան գումարով: Փոխհատուցումը չի նվազեցվի գործարքի և գրանցման ծախսերով:
- Օրինականացման ենթակա ԱԵԱ-ք կգրանցվեն որպես օրինական սեփականատեր և կփոխհատուցվեն որպես օրինական սեփականատեր:
- Օրինականացման ոչ ենթակա ԱԵԱ-ք կստանան միանվագ դրամական փոխհատուցում մեկ այլ տեղ վերաբնակեցվելու համար: Նրանք նաև իրավունք կունենան ստանալ վերակառուցման համար նախատեսված դրամական նպաստներ, եթե ընդգրկված են խոցելի մարդկանց խմբում, ինչպես նաև տեղափոխման դեպքում կստանան տեղափոխման համար դրամական աջակցություն:
- Վարձակալները կստանան սեփականության իրավունք և կփոխհատուցվեն որպես սեփականատերեր կամ վարձակալությամբ կստանան նոր հողակտոր: Եթե դա հնարավոր չէ (եթե ՀՀ օրենսդրության համաձայն վարձակալը չի կարող ստանալ սեփականության իրավունք կամ նա հրաժարվում է սեփականաշնորհելուց ու նոր վարձակալություն ստանալուց և նախընտրում է ստանալ փոխհատուցումը), ապա նրանք կստանան դրամական փոխհատուցում տուժած հողակտորի շուկայական կամ կադաստրային արժեքի (որ մեկը ամենաբարձրը եղավ) չափով:

#### **4.2.2 Պետական և համայնքային հողեր**

- Պետության և համայնքների սեփականություն հանդիսացող հողերը կօտարվեն համաձայն ՀՀ հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 7-րդ կետի 1-ին ենթակետի և միայն կատեգորիան էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների կատեգորիա փոխվելուց հետո: Հողերը կօտարվեն համաձայն ՀՀ հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 2-րդ կետի՝ էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների կատեգորիայի հողերի կադաստրային գնով: Կատեգորիայի փոփոխության հետ կապված ծախսերը կվճարի ԲԷՑ-ը:

#### **4.2.3 Շինություններ**

- Բնակելի շինությունների մասով փոխհատուցում կտրամադրվի ծրագրի ազդեցության բոլոր կրողներին՝ անկախ շինության գրանցման կարգավիճակից: Փոխհատուցում կտրամադրվի դրամական տեսքով՝ հաշվարկված որպես շինության փոխարինման արժեք գումարած 15% հավելվածար: Փոխհատուցման գումարից չեն

նվազեցվի կուտակված ամորտիզացիան, գործարքային ու գրանցման ծախսերը և մնացորդային արժեքը: Շինության վրա մասնակի ազդեցության և սեփականատիրոջ կողմից վերաբնակեցումից հրաժարվելու դեպքում, փոխհատուցումը կհաշվարկվի շինությանը հասցված վնասի և այն մինչ ծրագրի իրականացման սկիզբը ունեցած վիճակին հասցնելու համար անհրաժեշտ ծախսերի չափով: Վերաբնակեցված վարձակալները կստանան վերաբնակեցման նպաստ և զգալի վնասի տպաստ (տես ստորև ներկայացված պարբերությունը):

- Ոչ բնակելի շինությունների համար գործում է փոխհատուցման նույն սկզբունքը, ինչպես որ բնակելիի: Փոխհատուցում կարող են ստանալ միայն ծրագրի ազդեցության այն կրողները, որոնք օրենքով սահմանված կարգով գրանցել են իրենց սեփականությունը: Ծրագրի ազդեցության այն կրողները, որոնց գույքը օրինական գրանցված չէ, կարող են փոխհատուցում ստանալ միայն դրա գրանցումից հետո: Իրենց շինություններն օրինականացնելու համար ծրագրի ազդեցության կրողները պետք է կատարեն գույքի պետական գրանցման հետ կապված վճարումները: Խոցելի տնտեսությունները շինությունների օրինականացման համար կստանան աջակցություն՝ օրինականացման հետ կապված բոլոր վճարումները կկատարվեն Ծրագրի կողմից: Վերաբնակեցված վարձակալները կստանան վերաբնակեցման և զգալի ազդեցության նպաստ:

#### **4.2.4 Այլ փոխհատուցումներ և նպաստներ**

- Բերք: Կորցված բերքի դիմաց դրամական փոխհատուցումը հաշվարկվում է որպես մեկ տարվա համախառն բերքի շուկայական արժեք: Բերքի դիմաց փոխհատուցումը վճարվում է ինչպես հողի վարձակալներին, այնպես էլ սեփականատերերին՝ հաշվի առնելով երկուսի միջև բնավարձակալության գործող պայմանագիրը: Անօրինական հողօգտագործողները նույնպես իրավունք ունեն ստանալ մշակաբույսերի համար փոխհատուցում, համաձայն ՀՔ 4.12, նույն պայմաններով ինչ որ վարձակալները:

- Օառեր: Դրամական փոխհատուցում շուկայական գներով՝ կախված ծառերի տեսակից, տարիքից և բերքատվությունից: Այլ ընդունելի վայրում երկու անգամ ավելի մեծ թվով տնկիների տնկում:

- Ձեռնարկատիրական գործունեություն: Ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու հնարավորության մշտական կորստի դեպքում կտրամադրվի 1 տարվա զուտ եկամտի չափով դրամական փոխհատուցում, որը կհաշվարկվի հարկային հաշվետվությունների հիման վրա: Ձեռնարկատիրական գործունեության ժամանակավոր դադարեցման դիմաց տրվող փոխհատուցումը կհաշվարկվի որպես ամսեկան եկամտի (ըստ հարկային հաշվետվությունների) և գործունեության դադարեցման ընդհանուր տևողության արտադրյալ: Հարկային հաշվետվությունների բացակայության դեպքում, ձեռնարկատիրական գործունեություն իրականացնողների դրամական փոխհատուցումը կհաշվարկվի վերը նկարագրված եղանակով, սակայն հիմք ընդունելով նվազագույն չհարկվող աշխատավարձը (նվազագույն աշխատավարձը):



- Մշտական վարձու աշխատողներ: Դրամական փոխհատուցում կորցված աշխատավարձի չափով առավելագույնը վեց ամսով ձեռնարկատիրական գործունեության դադարեցման դեպքում:

- Վերաբնակեցման նպաստ: Ծրագրի ազդեցության այն կրողները, որոնք պարտադրված վերաբնակեցվում են (ներառյալ վարձակալները), կստանան տրանսպորտային ծախսերի և մեկ ամսվա ապրուստի համար բավարար վերաբնակեցման սուբսիդիաներ:

- Համայնքային շինություններ և հանրային ծառայություններ: Ամբողջությամբ կփոխարինվեն կամ կվերականգնվեն, որպեսզի լիարժեք կատարեն մինչև ծրագրի սկիզբն իրենց կատարած գործառույթները:

Զգալի վնասների համար նպաստ: Այն ԱԵԱ-ց, ովքեր կորցրել են գյուղատնտեսական հողի ավելի քան 10%-ը կամ ԱԵԱ-ք, որոնց ստիպել են վերաբնակեցվել(ներառյալ վերաբնակեցված վարձակալները) կստանան զգալի վնասների նպաստ 6 ամիս ժամանակահատվածի համար, ամսական 50000 ՀՀ դրամ (որը հավասար է ՀՀ օրենսդրությամբ սահմանված նվազագույն աշխատավարձի վեցապատիկին):

ԱԵԱ-ք կստանան հետևյալ դրամական աջակցությունը.

- Ձեռքբերման և փոխհատուցման վճարումների հետ կապված ծախսեր/վճարներ
- Լիազորագրի (արտասահմանից/ այստեղից) հետ կապված ծախսեր/վճարումներ
- Ազգային անձնագրի (նույնականացման քարտի) վերականգնման հետ կապված ծախսեր/վճարումներ
- Ժառանգության իրավունքի ճանաչման հետ կապված ծախսեր/վճարումներ
- Փոխանցման հարկերը և վճարումները, որոնք կապված են հողի ձեռք բերման հետ կվճարվեն Ծրագրի Դրամական Միջոցներից, որպես փոխհատուցման մաս:

Փոխհատուցում խոցելի խմբերին

Խոցելի մարդկանց (աղքատության շեմից ցածր ԱԵԱ-ք և այրիներից կամ տարեց գլխավորներից բաղկացած տնային տնտեսությունները) կտրամադրվեն վերականգնման պաստ, որը հավասար կլինի նվազագույն աշխատավարձի վեցապատիկին և կտրվի ծրագրի իրականացման հետ կապված աշխատանքի ընդունվելու նախապատվություն: Կանանց գլխավորությամբ տնային տնտեսությունները, տարեցներից, չքավորներից կամ հաշմանդամներից բաղկացած տնային տնտեսությունները ներառվում են խոցելի տնային տնտեսությունների մեջ: Խոցելի մարդիկ կստանան միանվագ դրամական աջակցություն 6 ամիս ժամանակահատվածի համար, ամսական 32,500 ՀՀ դրամ (նվազագույն աշխատավարձ):

Խոցելի խմբերի ներկայացուցիչներ համարվում են.

(i) Աղքատ տնտեսությունները, որոնք գրանցված են ՀՀ ԱՍՀՆ Ընտանեկան Նպաստների Համակարգում և ստանում են համապատասխան դրամական նպաստ՝ սահմանված ՀՀ օրենսդրությամբ:

(ii) Միայնակ, այրի կամ ընտանիքի կերակրողին կորցրած կանանցից բաղկացած տնտեսությունները, որտեղ բացի թոշակատուից, ՀՀ զինված ուժերում ծառայողից, 1-

ին և 2-րդ կարգի հաշմանդամից կամ մինչև 23 տարեկան առկա համակարգում սովորող ուսանողից բացի ուրիշ աշխատունակ տարիքի անձ չկա:

(iii) Թոշակատուներից, տարեցներից բաղկացած տնտեսությունները, որտեղ թոշակատուից, ՀՀ զինված ուժերում ծառայողից, 1-ին և 2-րդ կարգի հաշմանդամից կամ մինչև 23 տարեկան առկա համակարգում սովորող ուսանողից բացի ուրիշ աշխատունակ տարիքի անձ չկա:

#### Աջակցություն աղքատության շեմից ցածր գտնվող տնտեսություններին.

Եթե ծրագրի նկարագրության փուլում, ԾԻՄ (Ծրագրերի Իրականացման Միավոր) խորհրդատվական ընկերությունները հայտնաբերեն, որ ազդակիր տնային տնտեսությունն աղքատ է, բայց դեռ ընդգրկված չէ Ընտանեկան Նպաստների Համակարգում, ապա ԾԻՄ պետք է տեղեկացնի ՀՀ ԱՍՀՆ-ին և համապատասխան պետական սոցիալական ծառայություններին՝ տվյալ տնային տնտեսություններին Ընտանեկան Նպաստների Համակարգում ընդգրկելու համար՝ համաձայն ՀՀ օրենսդրությամբ սահմանված ընթացակարգի: Աղքատության շեմից ցածր գտնվող տնային տնտեսությունները պետք է համարվեն խոցելի և իրավունք ունեն ստանալ խոցելիության համար դրամական աջակցություն, լրացուցիչ նաև աջակցություն գրանցվելու Ընտանեկան Նպաստների Համակարգում: Այն ԱԵԱ-ք, որոնք որոշ պատճառներով չեն կարող գրանցվել Ընտանեկան Նպաստների Համակարգում, այսպիսով դեռ կստանան խոցելիության դրամական աջակցությունը (և բոլոր այլ փոխհատուցումները, որոնք նրանք իրավունք ունեն ստանալ):

### **4.3 Գույքի գնահատման մեթոդները**

Անշարժ գույքի գնահատման գործունեությունը լիցենզավորման ենթակա գործունեության տեսակ է («Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդված): Հետևաբար, անշարժ գույքի գնահատման գործունեությունն իրականացվում է իրավաբանական և ֆիզիկական անձանց կողմից՝ ըստ ՀՀ Լիցենզավորման մասին օրենքի պահանջների անշարժ գույքի գնահատման լիցենզիայի ստացումից հետո:

Անշարժ գույքի գնահատման պատվերի իրականացման իրավական հիմք է հանդիսանում անշարժ գույքի գնահատման սուբյեկտների միջև օրենսդրությամբ սահմանված կարգով կնքված պայմանագիրը (նույն օրենքի 9-րդ հոդված): Բացի այդ, նույն օրենքի 10-րդ հոդվածը թվարկում է այն պարտադիր տեղեկությունների ցանկը, որ վերոնշյալ պայմանագիրը պետք է պարունակի:

Անշարժ գույքի գնահատումը կատարվում է ՀՀ Կառավարության կողմից հաստատված ստանդարտներին համապատասխան (7-րդ հոդված): Գնահատման ստանդարտը պետք է պարունակի.

ա) անշարժ գույքի նկատմամբ իրավունքները, քանակական և որակական բնութագրերը,

բ) անշարժ գույքի գնահատման մեթոդները,

գ) անշարժ գույքի գնահատման արդյունքների ձևակերպման նկատմամբ պահանջները,

դ) հղումներն այլ նորմատիվ իրավական ակտերին,

ե) անշարժ գույքի գնահատողի վարքագծին ներկայացվող պահանջները:

Հաշվի առնելով օրենքի վերոնշյալ դրույթը՝ ՀՀ Կառավարությունը 2006թ.-ի հունիսի 8-ի ընդունեց «Հայաստանի Հանրապետությունում անշարժ գույքի գնահատման ստանդարտների սահմանման մասին» որոշումը, որով ՀՀ Էկոնոմիկայի և ֆինանսների նախարարությանը (այժմ՝ Էկոնոմիկայի նախարարություն) հանձնարարվեց 2006թ.-ի սեպտեմբերի 1-ից գործածության մեջ դնել Հայաստանի Հանրապետությունում անշարժ գույքի գնահատման չափանիշները:

Անշարժ գույքի արժեքի գնահատումը կատարվելու է Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան՝

(ա) **Գյուղատնտեսական հողերը** կգնահատվեն շուկայական գներով՝ հիմնվելով ծրագրի ազդեցության գնահատմանը նախորդող տարվա ընթացքում հողի առքուվաճառքի գործարքների ուսումնասիրության վրա:

(բ) **Տները/շինությունները** կգնահատվեն փոխարինման արժեքով՝ հաշվի առնելով շինության տեսակը, նյութերի արժեքը, աշխատուժի, տրանսպորտային և այլ շինարարական ծախսերը: Փոխհատուցման գումարից ամորտիզացիոն/գործարքային ծախսերը և ակտիվի մնացորդային արժեքը չեն նվազեցվի: Եթե ծրագրի ազդեցության կրողը չցանկանա տեղահանվել, ապա փոխհատուցում կտրամադրվի միայն շինությանը հասցված վնասի կամ վերանորոգման արժեքի չափով:

(գ) **Կորցված բերքը** մեկ տարվա փոխհատուցման դեպքում կգնահատվի զուտ շուկայական արժեքով հողակտորից վաճառքի ենթադրությամբ: Եթե ծրագրի ազդեցության կրողն իրավունք ունի ստանալ մեկ տարվա բերքի արժեքից ավել փոխհատուցում, ապա հաջորդ տարիների փոխհատուցումը կկազմի տարեկան բերքի համախառն շուկայական արժեքը:

(դ) **Ծառերը** կգնահատվեն տարբեր մեթոդոլոգիաներով՝ կախված նրանից դեկորատիվ են, թե բերքատու:

1. Դեկորատիվ ծառերը կգնահատվեն՝ հաշվի առնելով տարիքային կատեգորիան (i. տնկի, ii. միջին տարիքի և iii. տարեց), փայտի արժեքը և ծավալը:
2. Մրգատու/բերքատու ծառերը կգնահատվեն՝ հաշվի առնելով տարիքը (i. տնկի, ii. միջին տարիքի և iii. բերքատու): Աճի 1-ին և 2-րդ փուլում գտնվող ծառերը կփոխհատուցվեն ներդրումային արժեքով: Աճի 3-րդ փուլում գտնվող ծառերի փոխհատուցումը կհաշվարկվի որպես մեկ տարվա զուտ եկամտի և նոր բերքատու ծառերի աճեցման համար անհրաժեշտ տարիների արտադրյալ:

Փոխհատուցման միավոր արժեքները գնահատվելու են հավատարմագրված անկախ գնահատողների կողմից՝ համաձայն հստակ և թափանցիկ մեթոդոլոգիայի:

Անշարժ գույքի գնահատումից հետո գնահատողը պատրաստում է անշարժ գույքի գնահատման հաշվետվություն (Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին ՀՀ օրենքի 11-րդ հոդված): Օրենքը ամրագրում է հաշվետվության պարտադիր բնույթը: Օրինակ՝ ի հավելումն այլ տվյալների և տեղեկությունների, հաշվետվությունը պետք է պարունակի անշարժ գույքի գնահատման դասական երեք մեթոդների կիրառման հղումներ գնահատման ստանդարտներին, իսկ տվյալ անշարժ գույքի օբյեկտի գնահատման համար մեկ կամ երկու դասական մեթոդների կիրառման անհնարինության դեպքում՝ դրանց հիմնավոր պատճառաբանությունը: Անշարժ գույքի

գնահատման հաշվետվության նկատմամբ ընդհանուր պահանջները սահմանված են անշարժ գույքի գնահատման ստանդարտներով:

Հաշվետվության տվյալների, ինչպես նաև անշարժ գույքի շուկայական գնի արժանահավատության խնդիրները կարող են պարզաբանվել լիազոր մարմնին ուղղված անշարժ գույքի գնահատման գործունեության սուբյեկտներից յուրաքանչյուրի դիմումի հիման վրա կամ լիազոր մարմնի նախաձեռնությամբ, իսկ դրանց վերաբերյալ վեճերի առկայության դեպքում՝ դատական կարգով:

Ծանուցում՝ այն դեպքում, երբ անհրաժեշտություն կլինի գնահատել բիզնեսը և բիզնեսի, կորցրած շահույթի, վերաբնակեցման և այլնի համար փոխհատուցումը, սահմանված օրենքը ամբողջովին կիրառելի չէ, և անհրաժեշտություն կլինի պայմանագիր կնքել այն անձանց հետ, ովքեր հատուկ գիտելիք ունեն բիզնեսի կորստի կամ ազդեցության արժեքը սահմանելու վերաբերյալ:

## 5. ՎԳՊ պատրաստում, վերանայում և հաստատում

Էլեկտրահաղորդման գծի նոր ծրագծի աշխատանքային նախագծերի պատրաստումից հետո, որը կներառի բոլոր զուգահեռ հատվածները և շրջանցումները, կարելի է սկսել ծրագրի ազդեցությանն ենթակա մարդկանց մարդահամար, ներառյալ ազդեցությանն ենթակա անշարժ գույքի նախնական կադաստրային ուսումնասիրություն և դրա սեփականատերերի ու օգտագործման գրանցված իրավունք չունեցողների ցուցակագրում: Վերոնշյալ ուսումնասիրությունից հետո Կառավարությունը սույն ծրագիրը հռչակում է որպես պետության գերակա շահ: Կառավարության որոշման ընդունումից հետո գլխավոր կապալառուի/ԲԷՑ-ի ընտրած խորհրդատուները սկսում են մանրամասն ուսումնասիրություն, որը ներառում է ծրագրի ազդեցությանն ենթակա անձանց մարդահամար և կորուստների մանրամասն ցուցակ, որը նույնականացնում է հողակտորների և բոլոր մյուս ակտիվների վրա հնարավոր ազդեցությունները:

Դրանից հետո անկախ գնահատողն իրականացնում է ծրագրի ազդեցությանն ենթակա բոլոր ակտիվների գնահատում: Սա թույլ կտա ստեղծել փոխհատուցումների, վերաբնակեցման և կենսամակարդակի վերականգնման վճարների բյուջե: Սոցիալ-տնտեսական հարցում կանցկացվի ծրագրի ազդեցությանն ենթակա անձանց կենսամակարդակի սոցիալ-տնտեսական կողմերը (օրինակ՝ եկամուտների աղբյուրները, աղքատության մակարդակը, էթնիկ պատկանելիությունը, կրթությունը, առողջական վիճակը, սեփականության իրավունքով պատկանող/վարձակալված կամ օգտագործվող հողակտորները, տների տեսակները և արժեքը, և այլն) հասկանալու և կենսամակարդակի վերականգնման համար հատուկ փոխհատուցում պահանջող խոցելի խմբերի բացահայտման համար: Այս հարցումների տվյալների հիման վրա կնախապատրաստվի Վերաբնակեցման գործողությունների ծրագիր: Ծրագրի ազդեցության կրողները պարբերաբար կտեղեկացվեն ծրագրի ընթացքի մասին և բողոքների դիտարկման և բավարարման մեխանիզմի մասին, իսկ ՎԳՊ-ն շարունակաբար կվերանայվի: ՎԳՊ-ն պետք է հաստատվի ծրագիրը ֆինանսավորող կառույցի կողմից:

### **Հողի նկատմամբ գրանցված իրավունքներ չունեցող անձանց իրավունքների գրանցում**

Գործնականում առանց գրանցված իրավունքների հողակտորները զբաղեցնողների և օգտագործողների իրավունքները կարող են օրինական կերպով գրանցվել, եթե դրանք չեն գտնվում «կարմիր գոտիներում» (հատուկ հանրային կամ պետական օգտագործման համար նախատեսված տարածքներ՝ ռազմական նշանակության, հիվանդանոցների տարածքներ, դպրոցներին հատկացված տարածքներ և բնակության համար անպիտան տեղանքներ, ինչպիսիք են գետերի հունները, ռադիոակտիվ տարածքները և այլ վտանգավոր կամ էկոլոգիական առումով անբարենպաստ վայրերը (տես ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածը): Իրավունքներն օրինականացնելու նպատակով ծրագրի ազդեցությունը կրողները պետք է նախաձեռնեն օրինականացման գործընթաց՝ համաձայն համապատասխան վարչական կանոնների: Ծրագիրն իրականացնողը ծրագրի ազդեցությունը կրողներին կօժանդակի հողակտորների օրինականացման գործում:

### **Կենսամակարդակի բարելավման միջոցառումներ**

Համաշխարհային բանկի ԳՔ 4.01-ը և ԳՔ 4.02-ը խրախուսում է ծրագրի ազդեցության կրողների կենսամակարդակի բարելավման լրացուցիչ միջոցառումներ վերջիններիս կենսամակարդակը մինչ ծրագրի սկիզբը եղած մակարդակին հասցնելու և սոցիալական խոցելիությունը նվազեցնելու համար:

- Փոխհատուցումների կառավարման խնայողությունների և միկրովարկերի ծրագիր: Այս ծրագիրը մարդկանց կօգնի հաղթահարել դժվար տնտեսական պայմանները և կխթանի ներդրումային հնարավորությունների ստեղծումը, ինչը թույլ կտա ապահովել կենսամակարդակի կայուն աճ, այլ ոչ թե փոխհատուցված գումարների օգտագործում կարճաժամկետ սպառման կարիքների համար:
- Պետք է դիտարկել սոցիալական ծառայությունների բարելավման և իրավական օժանդակության հնարավորությունները, հատկապես այն տնային տնտեսությունների համար, որտեղ կանայք հանդիսանում են հիմնական եկամուտ վաստակողները:
- Փոխհատուցվող գումարների հաշվին կանանց համար լրացուցիչ ֆինանսական միջոցների մատչելիության և վերահսկողության բարելավումը պետք է հանդիսանան կարևոր նպատակ:

Պետք է դիտարկել ազգային կազմակերպությունների և միջազգային դոնորների կողմից իրականացվող ծրագրերի հետ համակարգման հնարավորությունները սիներգետիկ էֆեկտները մեծացնելու համար:

## **6. Իրականացման գործընթաց**

### **6.1 ՎԳՊ իրականացման գործընթաց**

ՎԳՊ իրականացումը պետք է ավարտվի մինչև շինարարական աշխատանքների սկիզբը: Կարելի է տարբերակել հետևյալ չորս փուլերը.

#### **1) ՎԳՊ պատրաստում**

ՎԳՊ պատրաստումը սկսվում է ՎԳՊ իրականացման ինստիտուցիոնալ լուծումների ապահովումից, ՎՔՇ առաջարկությունների վերանայումից և ՎԳՊ իրականացման համար ԲԷՑ-ին անհրաժեշտ օժանդակության նույնականացումից:

#### **2) ՎԳՊ պատրաստման աշխատանքների եզրափակում**

Այս փուլը պետք է իրականացվի աշխատանքային նախագծերի պատրաստմանը զուգահեռ: Այն ներառում է ծրագրի ազդեցության կրողների մարդահամար և վնասների մանրամասն ցուցակագրում, ինչպես նաև կենսամակարդակը մինչև ծրագրի սկիզբն եղած մակարդակը վերականգնելու և սոցիալական խոցելիությունից խուսափելու միջոցառումների մշակման համար անհրաժեշտ սոցիալ-տնտեսական հարցում:

#### **3) ՎԳՊ իրականացում**

Այս փուլը կսկսվի ՎԳՊ հաստատումից հետո: Ծրագրի ազդեցության կրողների հետ բանակցությունները կսկսվեն ծրագրի հենց այս փուլում: Այս փուլը ներառում է հողի գնահատման և ձեռքբերման ընթացակարգեր, փոխհատուցումների արդյունավետ վճարում, կենսամակարդակի բարձրացման միջոցառումներ և վերաբնակեցման ընթացակարգ: Այն ավարտվում է ծրագրի ազդեցության բոլոր կրողներին փոխհատուցման վճարումից հետո:

#### **4) Շինարարական աշխատանքների մեկնարկ**

Շինարարական աշխատանքները կսկսվեն միայն ծրագրի ազդեցության բոլոր կրողներին փոխհատուցման վճարումից հետո կամ առնվազն, երբ փոխհատուցումների վճարման գործընթացն ինտենսիվորեն ընթանում է: ՎԳՊ-ին համապատասխանությունը ստուգելու համար անհրաժեշտ է անկախ մշտադիտարկում իրականացնել:

Բողոքների դիտարկման և հասցեագրման, ինչպես նաև իրականացման մշտադիտարկման աշխատանքները կշարունակվեն նաև շինարարական աշխատանքների փուլում ծրագրի ազդեցության կրողների պահանջներին առանց ուշացումների դիտարկումը և վերաբնակեցման ընթացակարգերի ճիշտ իրագործումն երաշխավորելու համար:







ՀՊՇՍՕ Օրենքը հնարավորություն է տալիս ձեռքբերողին օտարման ենթակա սեփականության նախնական ուսումնասիրության դիմում ներկայացնելու Կառավարությանը՝ նախքան հանրային և պետական կարիքների համար սեփականության օտարման գործընթացի ապահովումը: Եթե այս տարբերակն ընդունելի է, ձեռքբերողը պետք է գրավոր դիմում ներկայացնի Կառավարությանը՝ սեփականության նախնական ուսումնասիրություն անցկացնելու նպատակով: Եթե կառավարությանն ուղարկված դիմումում ներկայացված տեղեկությունը հավանության արժանանա, ապա դիմումի խնդրանքը կբավարարվի (Տես «Հանրային և պետական կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի հոդված 7, 2-րդ կետը) «Սեփականության օտարման մասին նախնական ուսումնասիրության վերաբերյալ» որոշումը ընդունվել է:

Որոշումը պետք է սահմանի.

- Բացառիկ գերակա հանրային շահը
- Օտարման ենթակա սեփականության տեղը/գտնվելու վայրը
- Լիազորված մարմինը
- Օտարման ենթակա սեփականության ձեռքբերողը
- Ուսումնասիրության ժամկետը, որը չի կարող երկու շաբաթը գերազանցել՝

սկսած ուսումնասիրման մասին կառավարության որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից:

Ձեռքբերողի և պետական լիազորված մարմնի միջև կնքված պայմանագիրը ընդգրկվում է որոշման մեջ որպես հավելված: Պայմանագիրը ուժի մեջ է մտնում միայն որոշման հետ մեկտեղ:

Լիազորված մարմինը նույնպես կարող է մասնակցել ուսումնասիրությանը: Նախնական ուսումնասիրություն իրականացնելուց հետո կամ առանց դրա, ձեռքբերողը կարող է ուղարկել հարցում Կառավարությանը՝ հանրային և պետական կարիքների համար օտարվող սեփականության վերաբերյալ: Ձեռքբերողի կողմից ներկայացված տեղեկատվության հիման վրա կառավարությունը կարող է ընդունել որոշում սեփականության բացառիկ՝ գերակա հանրային շահի հիմնավորման վերաբերյալ (Տես «Հանրային և պետական կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի հոդված 6, 4-րդ կետը):

Կառավարության որոշումը ներառում է հետևյալ հիմնավորումները՝

- Սեփականության օտարման բացառիկ՝ գերակա հանրային շահի հիմնավորումը
- Օտարման ենթակա սեփականության ձեռքբերողը
- Օտարման ենթակա սեփականության տեղը/գտնվելու վայրը
- Օտարման գործընթացի վերջնաժամկետը, որը շարժական գույքի դեպքում չպետք է գերազանցի 1 տարին և 5 տարի, եթե օտարվող սեփականությունն անշարժ է
- Լիազորված մարմինը
- Օտարման ենթակա սեփականության նկարագրի վերաբերյալ արձանագրության կազմման գործընթաց

**Վերաբնակացման Գործողությունների Պլանի (ՎԳՊ) իրականացման միջոցներ**

Քայլ	Գործողություն	Պատասխանատվություն
Ա)	Վերաբնակեցման Գործողությունների Ծրագրի նախապատրաստում (ՎՊ)	
1	ԲՄԱԳ/ՎՔՇ գնահատում և թարմացում	Շինարար Կապալառու (ՇԿ)/ ԲԷՑ
2	Վերջնական Նախագծման Ավարտը	ԲԷՑ/ ՇԿ
3	Մարդահամարի և Կորուստների մանրամասն Գույքագրման, ՎԳՊ համար ՀՔՏՀՊ և Ժամանակացույց	ԲԷՑ
4	Կադաստրային տեղեկատվության և հողակտորների քարտեզների ձեռքբերում	ԲԷՑ / ՇԿ
5	Տեղական ինքնակառավարման մարմինների հետ համագործակցություն	ՇԿ / ԲԷՑ
6	ԱԵԱ ներկայացուցիչների և Համայնքային Ղեկավարների հետ անմիջական խորհրդատվություն և քննարկում	ԲԷՑ
7	Կառավարության Որոշում	ԲԷՑ
8	Սոցիալ-Տնտեսական Մարդահամարի Ղեկավարում/Կազմակերպում	ԲԷՑ
9	ԱԵԱ հետ Հանրային լսումների անցկացում	ԲԷՑ
10	Ճշտել հողի սեփականության իրավունքներն ու հայտնաբերել ոչ օրինական հողօգտագործողներին՝ հողի օրինականացման հարցում անկախ իրավախորհրդատուների կողմից աջակցություն ստանալու նպատակով	ԲԷՑ/լիցենզավորված օրինական գնահատող
11	Գույքի Գնահատում	Լիցենզավորված օրինական գնահատող մասնագետներ
12	Վերաբնակեցման Պլանում ներառել մարդահամարի տվյալները	ԲԷՑ
13	ՎԳՊ-ի ներկայացում ՀՀ Կառավարությանը	ԲԷՑ
14	Հանրային Խորհրդատվություն և Տեղեկատվության Հրապարակում	ԲԷՑ
Բ)	ՎԳՊ Ավարտ	
1	Մանրակրկիտ նախագծման հիման վրա ԱԵԱ ցուցակի և ազդեցությունների վերանայում	ՇԿ/ՎԳՊ մշտադիտարկող խորհրդատու
2	Գների վերանայում՝ սակագների թարմացված տեղեկատվության հիման վրա	ՇԿ/ ՎԳՊ մշտադիտարկող խորհրդատու
3	Խոցելի իրավիճակների սոցիալ-	ՇԿ/ԲԷՑ

Քայլ	Գործողություն	Պատասխանատվություն
	տնտեսական ուսումնասիրություն, սոցիոլոգների նշանակում՝ ազդեցության ենթարկված տնտեսությունների հետ աշխատանք տանելու համար	
4	Որտեղ հնարավոր է հողի օրինականացում	ՇԿ/Տեղական և Ազգային Կադաստր
5	Վերջնական ՎԳՊ հրապարակում և հաստատում	ԲԷՑ / ՀԲ
6	ՀԲ վերանայում և հաստատում	ՀԲ
<b>Գ)</b>	<b>ՎԳՊ իրականացում</b>	
1	ԱԵԱ հետ խորհրդատվություն	ՇԿ/ԲԷՑ/ՎԳՊ մշտադիտարկող խորհրդատու
2	Վերաբնակեցման և հողի օտարման ծանուցագրերի ուղարկում	ԲԷՑ
3	Փոխհատուցման վճարներ	ԲԷՑ
4	Համապատասխանելիության հաշվետվության կազմում	ԲԷՑ / ՎԳՊ մշտադիտարկող խորհրդատու
5	Շինարարական աշխատանքների սկիզբ	Կապալառու
6	Սոցիալ-տնտեսական հարցման կրկնություն	ՎԳՊ մշտադիտարկող խորհրդատու
<b>Դ)</b>	<b>Անընդհատ առաջացող խնդիրներ</b>	
1	ՎԳՊ իրականացման վերահսկում	ԲԷՑ/ՎԳՊ մշտադիտարկող խորհրդատու
2	Բողոքների կարգավորում, դատական գործընթացներ	ԲԷՑ / ՇԿ / Դատարաններ
3	Արտաքին աուդիտ և ՎԳՊ-ի իրականացման Համատեղության Հաշվետվության կազմում	ԲԷՑ/ՎԳՊ մշտադիտարկող խորհրդատու

### Փոխհատուցումների վճարում.

Փոխհատուցումները կներառվեն ծրագրի մեջ և կվճարվեն ԲԷՑ-ի կողմից: ԱԵԱ-ց փոխհատուցման վճարների տրամադրման հետևյալ գործընթացը և ընթացակարգը նախապես հաստատվել են:

(i) **ԱԵԱ ստուգում.** ԱԵԱ ստուգումը կիրականացվի ՀՀ օրենսդրությամբ սահմանված նույնականացման փաստաթղթերի միջոցով (անձնագրեր, նույնականացման քարտ և այլն):

(ii) **Փոխհատուցման վճարում.** Փոխհատուցման վճարումը կիրականացվի 15 օրվա ընթացքում պայմանագիրը ստորագրելուց հետո: Փոխհատուցումը կփոխանցվի ԱԵԱ բանկային հաշվի վրա: Եթե ԱԵԱ չունի բանկային հաշիվ, ապա Ծրագիրը կբացի այն ԱԵԱ-ց համար Ծրագրի/ՎԳՊ-ի բյուջեի հաշվին:

(iii) **Տարածքի ազատում.** Տարածի ազատման խնդրանքով ծանուցագրեր կուղարկվեն ԱԵԱ-ց՝ ստանալու փոխհատուցման կտրոնները սահմանված ժամանակահատվածում, ինչպես նաև տարածքի ազատում սահմանված ժամկետներում:

(iv) **Բացակա ԱԵԱ.** Եթե սեփականատերը Հայաստանում չի գտնվում, ապա գործարքը կարող է իրականացվել ԱԵԱ պաշտոնական ներկայացուցչի կողմից՝ հիմնվելով լիազորագրի վրա: Եթե ոչ մի ներկայացուցիչ չի նշանակված, ապա գույքը օրինական ձևով կօտարվի դատական գործընթացի միջոցով, և փոխհատուցումը կփոխանցվի դատարանի դեպոզիտային հաշվին: Դատարանը կվճարի այս փոխհատուցումը ցանկացած անձի, ով այն ստանալու համար կհաստատի իր իրավական իրավունքը:

Փոխհատուցման վճարումը կկատարվի հողատարածքների և կառույցների ձեռքբերման գործընթացից ոչ ուշ, քան 30 օր հետո: Առանց վերաբնակեցման դեպքերում փոխհատուցման վճարումը կկատարվի ոչ ուշ, քան ձեռք բերված հողերի կամ կառույցների փաստացի տիրապետումից 10 օր առաջ: ԲԷՑ-ը չի կարող սկսել շինարարական աշխատանքները որևէ հողատարածքներում՝ առանց լիարժեք փոխհատուցում վճարելու ազդեցության ենթարկված սեփականատերերին և առանց Պետական Կադաստրում գրանցվելու: Այնուամենայնիվ, վիճելի դեպքերում, գնահատված/բաշխված փոխհատուցման գումարը կգրավադրվի ԱԵԱ անուններով, մինչև դատարանի համապատասխան վճռի կայացումը: Այսպիսի դեպքերում, Ծրագրի շրջանակներում կարելի է զբաղեցնել որևէ տարածք՝ առանց շինարարական աշխատանքների իրականացման, մինչև վերաբնակեցման բոլոր փոխհատուցման խնդիրները չլուծվեն: Շինարարական աշխատանքները կարող են սկսել դատարանի որոշումն ուժի մեջ մտնելուց և ազդակիր ակտիվները Պետական Կադաստրում ԲԷՑ-ի անունով վերագրանցվելուց և ՎԳՊ-ի համապատասխանության հաշվետվությունը ավարտելուց հետո:

ԲԷՑ-ը պատասխանատու է փոխհատուցման, նպաստների ֆինանսավորման, բնակեցման ու փոխհատուցման հիմնադրամների տնօրինման, վերջինների ժամանակին և տեղին բաշխման համար: Դրամական նպաստները կամփոփվեն եռամսյակը մեկը՝ ՎԳՊ-ի շրջանակներում բյուջետային պարտավորությունների հիման վրա:

Ինչ վերաբերում է փոխհատուցման և վերաբնակեցման ֆինանսական հոսքերին, հարկ է նշել, որ հողի և մշակաբույսերի փոխհատուցման բյուջեն վճարվելու է ԲԷՑ-ի կողմից: Մյուս բոլոր տեսակի գույքի, ինչպես օրինակ փաստաթղթային հիմնավորում ունեցող կառույցների (օրինակ՝ տներ, խանութներ և այլն), շենքերի վերակառուցումների, խանութների, աշխատանքային զբաղվածության, եկամտի կորուստի և այլ նմանատիպ դեպքերի փոխհատուցման կապիտալները կվճարվեն ԲԷՑ-ի ծրագրի իրականացման մարմնի կողմից:

Կապալառուն, որը կվարձվի մանրամասն նախագիծ կատարելու և իրականացնելու համար (այն կլինի մեկ լիավարտ պայմանագիր գծի ամբողջական հատվածի համար), կղեկավարի ԱԵԱ հատուկ դեպքերը և կկազմակերպի դրանց համապատասխան լուսմները:

## 6.2 Բողոքների դիտարկման և բավարարման մեխանիզմ

Շինարարության գործընթացի ժամանակ, կլինեն Ծրագրից տուժած մարդիկ, ովքեր կզգան, որ իրենց հետ վարվել են ոչ արդարացի կերպով: Մա կարող է պատահել տարբեր պատճառներով. Կապալառուն չի հետևել շինարարական նորմերին, մշակաբույսերի վնասը չի փոխհատուցվել, վերաբնակեցման միջոցառումները չեն իրականացվել, հողի ուսումնասիրության ժամանակ որոշ մարդիկ չեն ընդգրկվել, մոռացվել են կամ ուղղակի թյուրիմացություն է տեղի ունեցել և այլն: Այսպիսի դեպքեր կարող են պատահել նաև խորհրդատվության, ծանուցման կամ գնահատման գործընթացներում: Նմանատիպ դեպքերի ժամանակ մարդկանց կոչ են անում արտահայտել իրենց բողոքները: Մշակվել է բողոքարկման մեխանիզմ, հետևաբար մարդիկ կարող են լուծել իրենց խնդիրներն ու բողոքները շատ կարճ ժամանակում և արդյունավետ կերպով՝ առանց դիմելու դատարան:

Հանրային քննարկումների, հարցումների և փոխհատուցման տրամադրման ժամանակ ադակիր անձինք պետք է բանավոր կամ գրավոր տեղեկացվեն իրենց իրավունքների և բողոքների ներկայացման ընթացակարգի մասին: Տեղական ՀԿ-ները, Օրհուս Կենտրոնի միջոցով կարող են տեղյակ պահել համայնքներին բողոքարկելու և ում ու որտեղ դրանք ուղղելու հնարավորության վերաբերյալ: Բողոքարկման մեխանիզմը պետք է կիրառվի գյուղական և տեղական կառավարման մարմինների մակարդակով, ինչպես նաև ազգային մակարդակով ԲԷՑ-ում:

Բողոքները կարող են հասցեագրվել տեղական համայնքային մակարդակով (մարզպետ), որտեղ բողոքը գրացվում է և փոխանցվում ԲԷՑ-ի բողոքների կարգավորման հանձնաժողովին, որը պատասխանատու է բողոքների կարգավորման վերաբերյալ որոշում կայացնելու համար:

Բողոքները, որոնք ներկայացվում են Շինարար Կապալառուի շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում, նույնպես պետք է փոխանցվեն ԲԷՑ-ի բողոքարկման հանձնաժողովին: Եթե նույնիսկ Կապալառուն որոշում է տեղում լուծում տալ խնդրին, բողոքների կարգավորման գործընթացի վերաբերյալ փաստաթղթերը պետք է ձևակերպվեն ԲԷՑ-ի բողոքարկման հանձնաժողովի/ հիմնական կետի մոտ:

Ինչպես նաև ծրագրի հետ կապված բոլոր բողոքները կարող են անմիջապես հասցեագրվել ԲԷՑ-ի բողոքների կարգավորման հանձնաժողովին հեռախոսի, էլ. փոստի կամ բողոքարկման ձևաչափի միջոցով: Ծրագրի հետ կապված բողոքները ներկայացնելու համար ԲԷՑ-ի կողմից առկա կլինի թե՛ գրի անմիջապես բողոքարկելու համար (ազգային մակարդակով), և բոլոր ստացված բողոքները պետք է գրանցվեն բողոքարկման գրանցամատյանում:

ԲԷՑ-ի բողոքների կարգավորման հանձնաժողովը հետագայում կորոշի խնդրին անմիջապես լուծում տալ, բողոքների կարգավորման հանձնաժողով հրավիրել, թե դատարան դիմել: Որոշումը պետք է ընդունվի 15-օրյա ժամկետում:

Էական բողոքների դեպքում, որոնք չեն կարող անմիջապես կարգավորվել, բողոքարկման հանձնաժողովի մշտական և ժամանակավոր ադամները կհրավիրվեն հանդիպման:

Բողոքների բավարարման համակարգի ձախողման պարագայում, ԱԵԱ կարող է դիմել համապատասխան դատարան:

Հանձնաժողովը բաղկացած կլինի մշտական և ժամանակավոր անդամներից:

Մշտական անդամներն են՝ ԲԷՑ-ը, Կապալառուն և իրավաբանը:

Ժամանակավոր անդամներն են՝ համապատասխան մարզի, համայնքի և ՀԿ-ի ներկայացուցիչները: Ժամանակավոր անդամները հանդիպումից 10 օր առաջ կտեղեկացվեն հանդիպման ամսաթվի և վայրի վերաբերյալ: Ժամանակավոր անդամների բացակայությունը չի կաշոյ հիմք լինել հանդիպումը չեղյալ համարելու համար: Իրավաբանը կարող է ներկայացնել մշտական անդամներից մեկին:

Շինարարական աշխատանքներն իրականացնող կապալառու կազմակերպությունը պարտավոր է իրականացնել աշխատանքը, համաձայն պայմանագրային պահանջների, որը ներառում է.

- անձնակազմի անդամ, ով պատասխանատու է բողոքարկման գործընթացի համար և տեխնիկական աջակցություն կտրամադրի ԲԷՑ-ին ցանկացած բողոք կարգավորելու համար, որը կարող է առաջանալ ՎԳՊ-ի կազմման և իրականացման ընթացքում,
- կանոնավոր մշտադիտարկման հաշվետվությունների պատրաստում ՎԳՊ-ի կազմման և իրականացման կարգավիճակի վերաբերյալ, ներառյալ ցանկացած առաջացած բողոքի վերաբերյալ մանրամասներ և ինչպես են դրանք կարգավորվել,
- եթե խոցելի ազդակիր անձինք որոշվում են՝ հետևելով մարդահամարի ավարտմանը, ապա կապալառուն պետք է նշանակի մասնագիտացված փաստաբաններ (սոցիալական աշխատողներ/իրավաբաններ) աջակցելու այս մարդկանց ամբողջ գործընթացի ժամանակ և նրանց համար գործի որպես անկախ իրավաբան, եթե որևէ բողոք առաջանա,
- ԲԷՑ-ի և ԱԵԱ հետ բողոքների որոշում արբիտրաժի միջոցով:

ԲԷՑ-ը կիրականացնի աշխատանքներ, որոնք ներառում են.


- անձնակազմի անդամ, ով պատասխանատու է բողոքարկման գործընթացի կարգավորման համար, սույնով վկայակոչվում է որպես բողոքները կարգավորող (ներառյալ առաջին շփումը, միջնորդության նպատակով պարբերաբար տեղանք այցելելը պետք է իրականացվի կապալառուի կողմից),
- հեռախոսի համարը, էլ. փոստի հասցեն և կոնտակտային անձի անունը ծրագրի համար նախատեսված տախտակների վրա,
- Կապալառուի և ԱԵԱ հետ բողոքների որոշում արբիտրաժի միջոցով,
- կապը դատարանի հետ:  
Այնուամենայնիվ ԱԵԱ հնարավորություն ունեն ընտրելու ներկայացուցիչ կամ անմիջապես կապ հաստատել ԲԷՑ-ի աշխատակազմի հետ, որը պատասխանատու է բողոքների բավարարման համար: Խոցելի տնտեսություններին, որպես աջակցություն, կկցվեն անհատական սոցիալական աշխատակից և իրավաբան:

Բացի այդ, իրավախորհրդատուները կաջակցեն չգրանցված սեփականատերեր համարվող ԱԵԱ հողի օրինականացման գործընթացում:

ՀԿ-ները, օրինակ Օրհուս Կենտրոնը կամ տեղական անդամ կազմակերպությունները կվերահսկեն բողոքի բավարարման բանակցությունները, կաջակցեն բողոքի վճռի կայացման գործընթացին, կբարձրացնեն հասարակական գիտակցությունը: ԱԵԱ պետք է տեղեկացվեն, որ համայնքի ղեկավարի հետ վեճի դեպքում, նրանք կարող են դիմել որևիցե ՀԿ՝ իրենց բողոքի լուծման համար: ՀԿ-ները կվերահսկեն ԱԵԱ և համայնքի ղեկավարների փոխհարաբերությունները:

Խրախուսվում են ԱԵԱ հետևյալ քայլերը.

- ա) Կապ հաստատել կապալառուի կողմից նշանակված բողոքարկման հարցերով զբաղվող անձնակազմի հետ՝ պարբերաբար կատարվող այցերի ընթացքում կամ տրամարված հեռախոսահամարով, կամ համայնքային ղեկավարի կամ ՀԿ-ի աշխատակիցների միջոցով
- բ) Ներկայացնել բողոքը և տրամադրել դեպքի հետ կապված տեղեկատվություն
- գ) Համաձայնության գալ կապալառուի հետ՝ մեղմացնող միջոցառումների հարցում
- դ) Համաձայնության գալ կապալառուի հետ՝ ներկայացված բողոքի լուծման ժամկետների հարցում: Բողոքները պետք է կանոնակարգվեն երկու շաբաթվա ընթացքում, այլապես տեղ կգտնեն համաձայնագրի հավելվածում
- ե) Ստորագրել, եթե մեղմացնող միջոցառումները համաձայնեցված կարգով իրականացվել են
- զ) Փնտրել աջակցություն ԲԷՑ-ից, եթե վերոնշյալ ընթացակարգը բավարար չէ
- է) Ներգրավել համապատասխան ՀԿ
- ը) Փնտրել աջակցություն դատարանում, եթե բոլոր տարբերակները ձախողվել են:



Նկար 6-3. Բողոքների Սեխանիզմի Ընթացակարգը



Այնուամենայնիվ, վերոնշյալ բոլոր բողոքարկման մեխանիզմները չեն սահմանափակում քաղաքացու իրավունքը հենց ամենատառջին քայլից դիմելու դատական համակարգի աջակցությանը: Բողոքարկման մեխանիզմը մշակվել է դատական երկարատև ընթացակարգերից խուսափելու համար:

Համաշխարհային Բանկն անմիջականորեն չի մասնակցում Բողոքարկման ընթացակարգին, բայց պետք է ստանա բողոքների հետ կապված բոլոր տեսակի զեկույցները. որոնք լուծում են ստացել, որոնք մեղմացվել են, որոնք ընթացքի մեջ են և այլն:

Հատուկ աջակցություն պետք է ցուցաբերվի այն ԱԵԱ համար, ովքեր ապրում են հեռավոր բնակավայրերում և խոցելի խմբերին են պատկանում, քանի որ բողոքարկման մեխանիզմը նրանց համար կարող է լինել անսովոր և նրանց փորձից ելնելով՝ կապը դատական գործընթացի հետ կարող է շատ խոստումնալից չթվալ: Սա կօգնի ամենախոցելի անձանց՝ կանխելու իրենց բողոքը դատարան ներկայացնելը:

Ծրագրի իրականացման ընթացքում առաջարկվում է գյուղի մակարդակով անկախ սոցիալական փորձագետի կողմից իրականացնել վերահսկում և անմիջական կապ հաստատել ԱԵԱ հետ, եթե դրա կարիքը կա:

Խոցելի ԱԵԱ ((կին գլխավորներից կամ տարեցներից բաղկացած տնային տնտեսությունները և աղքատության շեմից ցածր բոլոր տնային տնտեսություններ)) կստանան իրավաբանական աջակցություն/ սոցիալական մասնագետը կօգնի նրանց բողոքարկման գործընթացում:

### **6.3 Ինստիտուցիոնալ կարողություններ**

ԲԷՑ-ը վերջերս աշխատանքի է ընդունել սոցիալական մասնագետի տեղանքի հատուկ վերաբնակեցման պլանները սահմանելու համար, սակայն սոցիալական մասնագետը կարիք կունենա խորհրդատուի աջակցության ՎԳՊ-ի էական գործողությունների համար, օրինակ եթե տներ են ենթարկվում ազդեցության:

Լիավարտ հիմունքներով առաջարկվեց, որ անհրաժեշտությամբ դեպքում Վերաբնակեցման Գործողությունների Պլաններ կազմվեն որպես մանրամասն նախագծային գործընթացի մի մասը: Միջազգային փորձ ունեցող վերաբնակեցման փորձագետներ պետք է վարձվեն կապալառուի կողմից՝ աջակցելու ԲԷՑ-ին վերաբնակեցման գործողությունների նախապատրաստման և կենսամակարդակի վերականգնման գործընթացում:

Ուսուցումները պետք է հիմնված լինեն ԳՔ 4.12 ուղեցույցների և անվտանգության միջազգայնացման կիրառման վրա, թե ինչպես կազմել Վարեբնակեցման Գործողությունների Պլանը (ՎԳՊ): Վերաբնակեցման պլան է կազմվել ԷՄՀԾ-ի ծրագրի համար, որը կարող է վկայակոչվել: Բողոքների կարգավորման վերաբերյալ ուսուցումը և ԲԷՑ-ում բողոքներին արձագանքելը պետք է լինի կարողությունների համախմբման գործողությունների մի մասը:

Դասընթացների թեմատիկ ուղղվածությունը կարող է լինել.

- Ուսումնասիրության Մեթոդաբանությունը (Մարդահամար և Կորուստների գույքագրում)
- Կենսամակարդակի վերլուծություն՝ ԱԵԱ հետագա հեռանկարներն ու խոցելիությունը բացահայտելու համար
- Հողի ձեռքբերման և փոխհատուցման վճարների մեխանիզմների համակարգի հիմնումը և իրականացումը
- Բողոքարկման մեխանիզմների և բողոքների բավարարման հանձնաժողովի ստեղծում
- Վերաբնակեցման գործընթացի և վերաբնակեցման հանձնաժողովի ստեղծում
- Իրավական աջակցություն ԱԵԱ՝ դժվարությունների հաղթահարման համար
- Սոցիալական աշխատակիցների աջակցություն՝ խոցելի ԱԵԱ համար
- Կենսամակարդակի համապատասխան վերականգնման միջոցառումների իրականացում և հնարավորությունների տրամադրում, ինչպիսիք են փոխհատուցումը և տեղական մակարդակով զարգացման հնարավորությունը
- Ներքին և արտաքին մշտադիտարկում/ աուդիտ

#### 6.4 Մշտադիտարկում

Մշտադիտարկման միջոցառումները նախատեսված են փոխհատուցման և վերաբնակեցման միջոցառումների արդյունավետ և առանց ուշացումների իրականացումն ապահովելու համար:

Քանի որ Խորհրդային կարգերի փլուզումից հետո, Հայաստանում չի եղել էլեկտրահաղորդման գծերի կառուցման և վերանորոգման, ինչպես նաև ենթակայանների վերականգնման նմանատիպ բավարար փորձ, պետք է խստորեն վերահսկվի փոխհատուցման և վերաբնակեցման գործողությունների իրականացումը ՀՀ օրենսդրությանն ու միջազգային անվտանգության ստանդարտներին համապատասխանելու համար:

Գույքի գնահատման մեխանիզմների/ լիցենզավորման գործընթացների, ժամանակին փոխհատուցման վճարումների կատարման և ԱԵԱ իրազեկման, խորհրդատվության և մասնակցության գործընթացները կարող են սահմանափակվել: Գործող օրենքի ուժի մեջ մտնելը դիտարկվում է որպես ազգային համակարգի և միջազգային անվտանգության ստանդարտների միջև գոյություն ունեցող հիմնական բաց: Մյուս հարցը չգրանցված հողօգտագործողների կարգավիճակի կիրառումն է: Այստեղ օգնության են գալիս Համաշխարհային Բանկի անվտանգության միջոցառումները և բոլոր ԱԵԱ լիովին փոխհատուցվում են:

Հայաստանի օրենսդրությունը չի նախատեսում փոխհատուցման վճարների վերահսկման համակարգ: Հետևաբար, վերահսկումը ներկայացվել է որպես ԱԵԱ բողոքների և դատական գործընթացների շարունակություն: Որպեսզի վերոնշյալ գործընթացները համապատասխանեն միջազգային չափորոշիչներին, խորհուրդ է տրվում փոխհատուցման ընթացակարգերի և վճարների վերահսկումն իրականացնել միջազգային, անկախ վերահսկող խմբի կողմից, որը ծանոթ է տեղական իրավիճակին: Ծրագրի ընթացքում իրականացվող վերահսկման միջոցառումները բաղկացած են երեք քայլից.

**1. Մինչ աշխատանքային նախագծերի/հողաչափման աշխատանքների մեկնարկը.**

- Փոխհատուցման գործընթացում նախարարական, ազգային և տեղական մակարդակով ներգրավված կառույցների փոխգործակցություն և առաջադրանքների բաժանում:
- Տարածքային և տեղական մակարդակներով (մարզեր) հանրային իրազեկման և քննարկումների գործընթաց:
- Հողերի օտարման գործընթաց, ներառյալ հողերի ձեռքբերում և օտարումների գրանցում, և անշարժ գույքի գնահատում և բանակցության մեխանիզմներ:
- Վերաբնակեցման վերաբերյալ որոշման կայացման չափանիշներ:

**2. Հողաչափման աշխատանքներից հետո և շինարարական աշխատանքներից առաջ (կատարողական մշտադիտարկում).**

- Ծրագրի ազդեցության բոլոր կրողներին փոխհատուցման տրամադրում առանց ուշացումների:
- Խնայողական և ներդրումային ծրագրերի, ինչպես նաև շրջանառու հիմնադրամի ծրագրի հետ արդյունավետ փոխկապակցվածություն սոցիալական վիճակի վատթարացումից խուսափելու համար:
- Բողոքների դիտարկման և բավարարման մեխանիզմների ստեղծում և գործողություն:
- Իրազեկում և հանրային քննարկումներ ԱԵԱ-ց հետ:
- Հողի ձեռքբերման կարգավիճակ և հողի փոխհատուցման վճարներ:
- Փոխհատուցում ազդակիր շինությունների և այլ ակտիվների դիմաց:
- Կորցված եկամտի փոխհատուցում:
- Որպես փոխհատուցում տրամադրվող հողակտորների ընտրություն և բաշխում և Եկամտի վերականգնման միջոցառումներ:

**3. Շինարարական աշխատանքներից հետո (ազդեցության մշտադիտարկում).**

- ԱԵԱ-ց հնարավոր վերաբնակեցման միջոցառումների (Վերաբնակեցման գործողությունների պլան) և տեղահանումների արդյունավետ իրականացում:
- Բողոքների կարգավորման մեխանիզմների արդյունավետ իրականացում և արդյունքների ապահովում:
- Վերաբնակեցումից հետո կենսամակարդակի խնդիրների հասցեագրում:
- Կենսամակարդակի բարելավման միջոցառումների արդյունավետ իրականացում:
- Սոցիալական հարցում / մարդահամարի կրկնում՝ որոշելու արդյոք մարդիկ ի վիճակի են վերականգնելու իրենց կենսամակարդակը

Շինարարական աշխատանքներից հետո հարկավոր է ներգրավել անկախ աուդիտոր (ՎԳՊ-ի իրականացման Համատեղության Հաշվետվություն) փոխհատուցումների բավարարման և վերաբնակեցման արդյունավետության աուդիտ անցկացնելու համար յուրաքանչյուր ՎԳՊ-ի ներքո, որպես ծրագրի մի մաս: Եթե վերաբնակեցվածների կենսամակարդակը չի վերականգնվել մինչ ծրագրի սկիզբն եղած մակարդակի, ապա անհրաժեշտ է իրականացնել բարեկեցության բարելավման լրացուցիչ ծրագիր:

## 7. Հանրային քննարկումներ և տեղեկատվության հրապարակում

Համաձայն Համաշխարհային բանկի ԳՔ 4.12-ի՝ «փոխառուն հնարավոր տեղահանվողներին ծրագրի վերաբնակեցման խնդիրների վերաբերյալ տեղեկացնում է ծրագրի վաղ փուլում և ծրագրի նախագծման ժամանակ հաշվի է առնում իրենց հայացքները»: Ըստ հավասարության սկզբունքի՝ ՎԳՊ-ները պետք է պատրաստվեն բոլոր ազգակի անձնաց հետ հանրային քննարկումների գործընթացի միջոցով:

Հողաչափման աշխատանքների մեկնարկի մասին որոշման ընդունումից հետո պետք է սկսել հանրային իրազեկում և ԱԵԱ-ց ներգրավում: Այդ պահին նաև պետք է սկսվեն ՎԳՊ նախապատրաստման աշխատանքները: ՎԳՊ պատրաստման սկզբնական փուլերում պետք է կազմել նաև Հանրային Քննարկումների և Տեղեկատվության Հրապարակման պլան (ՀՔՏՀՊ):

Անհրաժեշտ է ծրագրի մասին տեղեկացնել համապատասխան շրջանների, քաղաքների և համայնքների ղեկավար մարմիններին: Կարևոր է ստուգել ծրագրի հետ կապված գործողությունների իրականացման համար առկա մարդկային ռեսուրսները և, անհրաժեշտության դեպքում, մեծացնել աշխատակիցների թիվը և/կամ կազմակերպել դասընթացներ:

ԱԵԱ կարծիքները, մասնակցության շահագրգռվածությունն ու առաջարկները պետք է հաշվի առնվեն ծրագրի մեղմացնող միջոցառումների գործընթացում:

Համայնքի ղեկավարը շատ կարևոր դեր ունի ծրագրում: Նա պետք է տեղյակ լինի ծրագրի համապատասխան գործողությունների մասին, ուղեկցի նախագծողին, անդամակցի վերաբնակեցման և բողոքարկման հանձնաժողովներին: Այնուամենայնիվ, տեղեկատվությունը չպետք է սահմանափակվի միայն Համայնքի ղեկավարների մակարդակով, պետք է օգտագործվեն նաև այլ անկախ աղբյուրներ:

Վերջնական նախագիծը պետք է քննարկվի ծրագրին առնչվող յուրաքանչյուր գյուղում և պետք է կազմակերպվեն հանդիպումներ ծրագրի շահագրգիռ կողմերի հետ:

ԱԵԱ կտեղեկացվեն առողջությանն ու անվտանգությանը սպառնացող հարցերի վերաբերյալ, ինչպես օր.՝ Էլեկտրական և մագնիսական դաշտերի (ԷՄԴ) վտանգի և նվազագույն անվտանգության հեռավորությունների վերաբերյալ, որոնք պետք է պահպանվեն (110կՎ ՕԷԳ-ի համար ԱԳ-ն պետք է լինի 20մ հեռավորության վրա դրսի հաղորդալարից, իսկ նվազագույն ԷՄԴ հեռավորությունը պետք է լինի 7մ):

Տեղական ինքնակառավարման մարմինների ցանկացած ներկայացուցիչ պետք է իրազեկ լինի ծրագրին (մշակութային ժառանգության պահպանության գործակալության տեղական մասնաճյուղեր, բնապահպանական, գյուղատնտեսական մասնաճյուղեր, կադաստրային գրասենյակ և այլն):

Հանրության իրազեկվածությունն ու գործողությունների իրականացումը պետք է համատեղվեն վերջնական նախագծի հետ և ուղեկցվեն մանրամասն մարդահամարով և ազդեցության ենթարկված սեփականության/ կորուստների գույքագրումով:

ԱԵԱ պետք է տեղեկացվեն վերջնաժամկետների մասին, հասկանալու, որ էլեկտրահաղորդման գծի միջանցքում նոր շինությունների կառուցումը ենթակա չէ փոխհատուցման:

Հետագայում, ԱԵԱ պետք է տեղեկացվեն բողոքների բավարարման ընթացակարգի վերաբերյալ: ԱԵԱ պետք է գրավոր կերպով ստանան ծանուցագրեր փոխհատուցման և վերաբնակեցման ընթացակարգերի հետ կապված իրենց իրավունքների վերաբերյալ, ինչպես նաև կանխիկ կամ հողային փոխհատուցումների հնարավորությունների մասին և ում կարող են բողոքել:

Խոցելի ԱԵԱ (կին գլխավորներից կամ տարեցներից բաղկացած տնային տնտեսությունները և աղքատության շեմից ցածր բոլոր տնային տնտեսություններ) կտրամադրվի անհատական դեպքն ուսումնասիրող մասնագետ (իրավաբան կամ սոցիոլոգ): Այդ ներկայացուցիչը պետք է ընտրվի և ներկայացվի ԱԵԱ, որպեսզի հետագայում աջակցի նրանց հետագա քայլերում:

ՎԳՊ օրինակները պետք է թարգմանվեն հայերեն լեզվով և հասանելի լինեն ԱԵԱ և մյուս մասնակիցների՝ հատկապես Ծրագրի տարածքում բնակվողների համար: Մարզերի քաղաքապետարաններն ու գյուղապետարանները ամենահարմար տարածքներն են՝ տեղեկատվություն ստանալու համար:

**Հրագրան-Շինուհայր ՕԷԳ-ից ազդեցությունը կրող գյուղերը.**

<b>ՀՀ վարչական շրջան</b>	<b>Ծրագրի ազդեցությանն ենթակա գյուղեր/քաղաքներ</b>
<b>Կոտայքի մարզ</b>	Գյուղ Ջրառատ քաղաք Չարենցավան
<b>Գեղարքունիքի մարզ</b>	Գյուղ Լճաշեն Գյուղ Լճափ Գյուղ Հայրավանք Քաղաք Գավառ Գյուղ Երանոս Գյուղ Վարդաձոր Գյուղ Ձորագյուղ Գյուղ Լիճք Գյուղ Վերին Գետաշեն Գյուղ Մադինա Գյուղ Լեռնակերտ Գյուղ Յանեղ
<b>Վայոց Ձորի մարզ</b>	Գյուղ Աղնջաձոր Գյուղ Թառաթումբ Գյուղ Կարագլուխ Գյուղ Սալի Գյուղ Շատին

ՀՀ վարչական շրջան	Ծրագրի ազդեցությանն ենթակա գյուղեր/քաղաքներ
	Գյուղ Գետափ Քաղաք Եղեգնաձոր Գյուղ Ագարակաձոր Գյուղ Մալիշկա Քաղաք Վայք Գյուղ Սարավան Գյուղ Գորհայկ Գյուղ Սամակկունք
Սյունիքի մարզ	Գյուղ Շաղատ Գյուղ Անգեղակոթ Գյուղ Շաքի
Լոռու մարզ	քաղաք Վանաձոր
Արմավիրի մարզ	գյուղ Փարաքար

Ծրագրի ազդեցությանը ենթարկված գյուղերը (Լալվար/Նոյեմբերյան ՕԷԳ).

ՀՀ վարչական շրջան	Ծրագրի ազդեցությանն ենթակա գյուղեր/քաղաքներ
Լոռու մարզ	Սանահին գյուղ Հաղպատ գյուղ Նեղոց գյուղ Ախթալա գյուղ Փոքր Այրում գյուղ Մեծ Այրում գյուղ Ճոճկան գյուղ

Ծրագրի նախագծման և իրականացման ողջ ընթացքում պետք է խորհրդատվություններ անցկացնել ազդակիր գյուղերի համայնքի ղեկավարների հետ: Տեղեկատվությունը պետք է ընգրկի բոլոր փաստաթղթերը և քարտեզները, ինչպես նաև տեղեկատվական գրքույկները: Լուրջ վնասի ենթարկված գյուղերում առաջարկվում է անցկացնել Ֆոկուս խմբային քննարկումներ ԱԵԱ և այլ շահագրգիռ անձանց հետ:

Փաստաթղթերը պետք է հրապարակվեն առնվազն 20 օրով, որպեսզի բոլոր շահագրգիռ կողմերը և ծրագրի ազդեցության պոտենցիալ կրողները կարողանան ՎԳՊ վերաբերյալ ներկայացնել իրենց դիտողություններն ու մեկնաբանությունները:

## 8. Ծախսեր և բյուջե

Ըստ Համաշխարհային բանկի ԳՔ 4.12-ի՝ «ծրագրի նպատակին հասնելու համար վերաբնակեցման միջոցառումների ամջող ծախսերը ներառվում են ծրագրի ընդհանուր ծախսերի մեջ: Վերաբնակեցման ծախսերը, ինչպես ծրագրի այլ միջոցառումների ծախսերը, դիտարկվում են որպես տնտեսական ծախսեր, իսկ վերաբնակեցվածներին բաժին ընկնող օգուտները (համեմատած «առանց ծրագրի» սցենարի հետ) գումարվում են ծրագրի տնտեսական օգուտներին: Ծրագրի վերաբնակեցման բաղադրիչները կամ վերաբնակեցման առանձին ծրագրերը պարտադիր չէ, որ տնտեսապես կենսունակ լինեն, բայց պետք է ապահովեն տնտեսական շահավետությունը» (ուղեցույցներ ԳՔ. 4.12):

Փոխհատուցման և վերաբնակեցման բյուջեն պետք է ընդգրկվի Համաշխարհային Բանկի կողմից ՀՀ Ֆինանսների նախարարությանը տրամադրված վարկի մեջ, որը հետագայում կտրամադրի միջոցներ որպես ենթավարկ էլեկտրահաղորդման ընկերությանը:

## 9. Հավելվածներ

### 9.1 Իրավունք և փոխհատուցման աղյուսակ

No.	Ազդեցության կատեգորիան	ԱԵԱ կատեգորիան	Փոխհատուցում
1	Գյուղատնտեսական նշանակության հող	Օրինական սեփականատերեր	(i) կանխիկ շուկայական կամ կադաստրային (որն ավելի մեծ է) արժեքի չափով գումարած 15% դրամական աջակցություն: Այն դեպքերում, երբ գոյություն չունի հողերի առքուվաճառքի ակտիվ շուկա, ապա դրամական փոխհատուցումը հաշվարկվում է նույն գյուղում գտնվող նմանատիպ հողակտորի արժեքի հիման վրա, որն ընդունելի է ԱԵԱ-ց համար գումարած 15% դրամական աջակցություն, կամ  (ii) նույն գյուղում գտնվող և նույն արժեքով/ արտադրողականությամբ նմանատիպ հողակտոր, որն ընդունելի է ԱԵԱ-ց համար:.  Փոխհատուցումն ազատված է գործարքային պահումներից և գրանցման ծախսերից:
		Օրինականացման եթակա ԱԵԱ, հողօգտագործող	Կգրանցվեն որպես օրինական սեփականատեր և կփոխհատուցվեն որպես օրինական սեփականատեր:
		Օրինականացման ոչ ենթակա ԱԵԱ	Կստանան միանվագ դրամական փոխհատուցում մեկ այլ տեղ վերաբնակեցվելու համար: Նրանք նաև իրավունք կունենան ստանալ վերակառուցման համար նախատեսված դրամական նպաստներ, եթե ընդգրկված են խոցելի մարդկանց խմբում, ինչպես նաև տեղափոխման դեպքում կստանան տեղափոխման համար դրամական աջակցություն:
2	Ոչ գյուղատնտեսական նշանակության հող (Բնակելի/ առևտրային նշանակությ. հողատարածք	Օրինական սեփականատերեր	Կանխիկ հողակտորի շուկայական արժեքի չափով գումարած 15% դրամական աջակցություն: Այն դեպքերում, երբ գոյություն չունի հողերի առքուվաճառքի ակտիվ շուկա, ապա դրամական փոխհատուցումը հաշվարկվում է նույն գյուղում գտնվող նմանատիպ հողակտորի արժեքի հիման վրա, որն ընդունելի է ԱԵԱ-ց համար գումարած 15% դրամական աջակցություն:
		Օրինականացման եթակա ԱԵԱ	Փոխհատուցում որպես օրինական սեփականատեր/վարձակալ:
		Օրինականացման ոչ ենթակա ԱԵԱ	Կստանան միանվագ դրամական փոխհատուցում մեկ այլ տեղ վերաբնակեցվելու համար: Նրանք նաև իրավունք կունենան ստանալ վերակառուցման համար նախատեսված դրամական նպաստներ, եթե ընդգրկված են խոցելի մարդկանց խմբում, ինչպես նաև տեղափոխման դեպքում կստանան տեղափոխման համար դրամական աջակցություն:
3	Պետական/ համայնքային/ քաղաքային հողատարածք	Պետական/ՀՀ	Այն դեպքերում, երբ օրինական սեփականատերը պետությունը/ համայնքն է (գյուղ, քաղաք կամ ՀՀ), հողերը կօտարվեն այն գնով, որը համարժեք է ենթադրյալ, տրանսպորտային, հաղորդակցման, կոմունալ ենթակառուցվածքային կատեգորիա ունեցող հողերի կադաստրային գնին: Պետական և համայնքային հողերի կատեգորիաները փոխելու հետ կապված ծախսերը կվճարվեն ԲԷՑ-ի կողմից



No.	Ազդեցության կատեգորիան	ԱԵԱ կատեգորիան	Փոխհատուցում
4	Բնակելի կառույցներ	Պետական/ՀՀ	<p>Անկախ տան գրանցման կարգավիճակից, բոլոր ԱԵԱ կատանան կանխիկ փոխհատուցում, որպես տեղափոխման ծախս՝ գումարած 15% դրամական աջակցություն:</p> <p>Փոխհատուցումը պետք է տրամադրվի առանց հաշվի առնելու արժեզրկման, գործարքի և գրանցման հետ կապված ծախսերը և պահպանման նյութերը: Մասնակի ազդեցության և սեփականատիրոջ վերաբնակեցումը մերժելու դեպքում, բնակելի կառույցների վնասները կներառեն միայն շինության ազդեցության ենթարկված հատվածի համար փոխհատուցումը և նրա վերականգնումը նախկին տեսքին:</p> <p>Վերաբնակեցված վարձակալները կտրամադրվեն ամբողջական վերաբնակեցման և զգալի ազդեցությունների համար դրամական աջակցություն (տես վերևում):</p>
5	Ոչ բնակելի կառույցներ	Բոլոր ԱԵԱ	<p>Կփոխհատուցվի նույն սկզբունքով, ինչպես որ բնակելիի դեպքում միայն այն ԱԵԱ-ց նկատմամբ, ովքեր օրենքով սահմանված կարգով գրանցել են իրենց սեփականությունը: Այն ԱԵԱ-ք, որոնց գույքը օրինական գրանցված չէ, կարող են փոխհատուցում ստանալ միայն դրա գրանցումից հետո (համաձայն ՀՀ օրենսդրության): Օրինականացման հետ կապված բոլոր վճարումները կկատարվեն Ծրագրի Դրամական Միջոցներով: Օրինականացման ոչ ենթակա ԱԵԱ-ք կատանան կանխիկ փոխհատուցում շուկայական արժեքի չափով:</p>
6	Մշակաբույսեր	Բոլոր ԱԵԱ	<p>Կորցրած բերքի դիմաց կանխիկ փոխհատուցումը հաշվարկվում է մեկ տարվա համախառն բերքի շուկայական արժեքի չափով: Մշակաբույսերի դիմաց փոխհատուցումը վճարվում է ինչպես հողի սեփականատերերին, այնպես էլ վարձակալներին՝ հաշվի առնելով երկուսի միջև բնավարձակալության հետ կապված հատուկ համաձայնության: Անօրինական հողօգտագործողները նույնպես իրավունք ունեն ստանալ մշակաբույսերի համար փոխհատուցում, համաձայն ՀՔ 4.12, նույն պայմաններով ինչ որ վարձակալները:</p>
7	Ծառեր	Բոլոր ԱԵԱ	<p>Կանխիկ փոխհատուցում շուկայական գներով՝ կապված ծառերի տեսակից, տարիքից և բերքատվությունից: Կանխիկ փոխհատուցում փայտանյութ ստանալու նպատակով տնկված մասնավոր և բերքատու (միրգ/ընկույզ) ծառեր: Պետական/համայնքային հողատարածքների դեպքում այլ ընդունելի վայրում երկու անգամ ավելի մեծ թվով տնկիների տնկում:</p>
8	Ձեռնարկատիրական գործունեություն	Բոլոր ԱԵԱ	<p>Ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու հնարավորության մշտական կորստի դեպքում կտրամադրվի 1 տարվա զուտ եկամտի չափով դրամական փոխհատուցում, որը կհաշվարկվի հարկային հաշվետվությունների հիման վրա: Ձեռնարկատիրական գործունեության ժամանակավոր դադարեցման դիմաց տրվող փոխհատուցումը կհաշվարկվի որպես ամսական եկամտի և գործունեության դադարեցման ընդհանուր տևողության արտադրյալ, ըստ հարկային հաշվետվությունների (հիմնականում ոչ պաշտոնական/փոքր բիզնեսի դեպքում): Հարկային հաշվետվությունների բացակայության դեպքում, ձեռնարկատիրական գործունեություն իրականացնողների դրամական փոխհատուցումը կհաշվարկվի վերը նկարագրված եղանակով, սակայն հիմք ընդունելով նվազագույն չհարկվող աշխատավարձը (ՀՀ օրենսդրությամբ սահմանված նվազագույն աշխատավարձը): Ձեռնարկատիրական գործունեության</p>

No.	Ազդեցության կատեգորիան	ԱԵԱ կատեգորիան	Փոխհատուցում
			պարապուրդի արդյունքում աշխատավարձերի կորուստների փոխհատուցումը կազմում է առավելագույնը 6 ամիս:
9	Ֆիզիկական վերաբնակեցում	Բոլոր վերաբնակեցված ԱԵԱ-ք	ԱԵԱ-ք, ովքեր հարկադրված էին տեղափոխվել (ներառյալ վարձակալները) կստանան տեղափոխման համար դրամական աջակցություն, ինչը բավարար կլինի հոգալու ճանապարհածախսն ու մեկ ամսվա կենցաղային ծախսերը:
10	Զգալի կորուստների դրամական աջակցություն	Զգալի ազդեցության ենթարկված ԱԵԱ-ք	ԱԵԱ-ց ազդակիր գյուղատնտեսական նշանակության հողատարածքի 10%-ից ավել ազդեցության դեպքում նրանց (սեփականատերեր, վարձակալներ և բնամթերքով վարձակալներ) կտրվի զգալի վնասների դրամական աջակցություն գյուղատնտեսական եկամտի կորստի դիմաց, որը համարժեք կլինի կորցրած հողի տարեկան բերքի շուկայական արժեքին: Բոլոր գնահատումները կկատարվեն լիցենզավորված գնահատող խորհրդատուի կողմից՝ հիմնվելով գյուղատնտեսական հողատարածքի գույքագրման և չափագրման տվյալների վրա:
11	Խոցելության դրամական աջակցություն	Խոցելի ԱԵԱ-ք/աղքատության շեմից ցածր ԱԵԱ-ք	Խոցելի մարդկանց (աղքատության շեմից ցածր ԱԵԱ-ք և այրիներից կամ տարեց գլխավորներից բաղկացած տնային տնտեսությունները) կտրամադրվեն վերականգնման պաստ, որը հավասար կլինի նվազագույն աշխատավարձի վեցապատիկին և կտրվի ծրագրի իրականացման հետ կապված աշխատանքի ընդունվելու նախապատվություն: Կանանց գլխավորությամբ տնային տնտեսությունները, տարեցներից, չքավորներից կամ հաշմանդամներից բաղկացած տնային տնտեսությունները ներառվում են խոցելի տնային տնտեսությունների մեջ: Խոցելի մարդիկ կստանան միանվագ դրամական աջակցություն 6 ամիս ժամանակահատվածի համար, ամսական 32,500 ՀՀ դրամ (նվազագույն աշխատավարձ):
12	Համայնքային և հանրային կառույցներ	Պետական/ՀՀ	Ամբողջովին կտեղափոխվեն կամ կվերականգնվեն այնպես, ինչպես եղել է մինչև ծրագիրը:
13	Այլ պետական ունեցվածք/օր. ծառեր	Պետական/ՀՀ	Երկու անգամ ավել տնկիների վերատնկում հարմար վայրերում և 3 տարվա խնամքի իրականացում:

Խոցելի են համարվում հերկյալ ներկայացուցիչները.

- (i) Աղքատ տնտեսությունները, որոնք գրանցված են ՀՀ ԱՍՀՆ Ընտանեկան Նպաստների Համակարգում կամ ունեն գրանցվելու իրավունքը և ստանում են համապատասխան դրամական նպաստ, որը սահմանված է ՀՀ օրենսդրությամբ.
- (ii) Միայնակ, այրի կամ ընտանիքի կերակրողին կորցրած կանանցից բաղկացած տնտեսությունները, որտեղ բացի թոշակատուից, ՀՀ զինված ուժերում ծառայողից, 1-ին և 2-րդ կարգի հաշմանդամից կամ մինչև 23 տարեկան առկա համակարգում սովորող ուսանողից բացի ուրիշ աշխատունակ տարիքի անձ չկա.
- (iii) Թոշակատուներից, տարեցներից բաղկացած ընտանիքներ, որտեղ թոշակատուից, ՀՀ զինված ուժերում ծառայողից, 1-ին և 2-րդ կարգի հաշմանդամից կամ մինչև 23 տարեկան ցերեկային համակարգում սովորող ուսանողից բացի ուրիշ աշխատունակ տարիքի չկա:

## 9.2 Մարդահամարի տվյալների ցուցակ

### Անձինք.

- Յուրաքանչյուր ազդեցության ենթարկված խմբում անհատների և տնտեսությունների հավաքագրում
- Յուրաքանչյուր անհատի տարիքի, սեռի, զբաղվածության վերաբերյալ տեղեկություններ (տես ԱԵԱ խմբերի ցուցակը, ովքեր կարող են դուրս մնալ մարդահամարի գործընթացից)

### Սեփականություն.

Անձնական սեփականությունը իր մեջ ներառում է սեփականության հետևյալ մանրամասները.

- շինություններ՝ տներ, ֆերմաներ, խանութներ, արտադրական ձեռնարկություններ, հացահատիկի չորացման տարածքներ, հասարակական զուգարաններ
- հողի տեսակ՝ ոռոգվող կամ չոռոգվող հողեր, անտառային տարածքներ, մարգագետիններ/արոտավայրեր, չհերկված հողեր և այլն: Հողում առկա մշակաբույսերի նկարագրությունն ու գնահատումը:
- այլ՝ անասուններ, ջրհորներ, ծառեր

### Հանրային և համայնքային սեփականություն.

- հող՝ գյուղական ընդհանուր հողեր, խոտհունձի տարածքներ, ձկնորսական գոտիներ և այլն;
- կառույցներ և սարքավորումներ՝ դպրոցներ, առողջապահական կենտրոններ, գերեզմանոցներ, համայնքային ադմինիստրատիվ կենտրոններ, հասարակական տրանսպորտ, բանկեր,
- ենթակառուցվածքներ՝ խմելու ջրի համակարգ և կոյուղիներ, մոտեցնող և ներքին ճանապարհներ, էլեկտրաէներգիայի և էներգիայի այլ աղբյուրներ

### ԱԵԱ եկամուտները այլ աղբյուրներից, ընդգրկում են .

- ֆերմայից ստացվող եկամուտ
- ֆերմայից դուրս իրականացվող աշխատանք
- ոչ պաշտոնական ոլորտի գործունեություն

Աղբյուր. Հնդկաստանի Վերաբնակեցման Ձեռնարկ, Համաշխարհային Բանկ, 1995, էջ 39

### 9.3 Վկայակոչումներ

**ADB/MoTC (2010).** Հայաստան. Հյուսիս-հարավ ճապարհի միջացքի ներդրման ծրագիր. Վերաբնակեցման Քաղաքականության Շրջանակ:

**ADB/Municipality of Yerevan (2010).** Երևան, Արևմտյան հատվածի շրջանցման մայրուղիների շրագիր. Վերաբնակեցման Գործողության Պլան:

*Հայաստանի Տարածաշրջանային Զարգացման Ծրագիր (ARDEP): Գեղարքունիքի տարածաշրջանային զարգացման պլան, 2006-08*

**CARMAC /** Համայնքային գյուղատնտեսական ռեսուրսների ղեկավարման և մրցակցության ծրագիր (2010). ՇՄԿՊ, նոյեմբեր 2010

**CENN Կովկասյան բնապահպանական ՀԿ-ների ցանց (2004).** Հայաստանում բնապահպանական ազդեցության գնահատման էֆեկտիվության գնահատում.

**Գյուղատնտեսության Զարգացման Միջազգային Ֆոնդ (ԳԶՄՖ) (2003).** Երկրի ռազմավարական հնարավորությունների փաստաթուղթ,

**ԲԷՑ (2007).** Շահագործմա ձեռնարկ գլուխներ 2,3

**Միջազգային Ֆինանսական Կորպորացիա (ՄՖԿ).** Վերաբնակեցմա Քաղաքականության Պլանի կազմման ձեռնարկ

**ՀՀ Բնապահպանության նախարարություն (ԲՆ) (2009).** Բիոբազմազանության վերաբերյալ չորրորդ ազգային հաշվետվության կոնվենցիա.

**Սևաի Ազգային Պարկ (առանց ամսաթվի).** Սևան Ազգային Պարկի ու բուֆերային գոտու լանդշաֆտի նկարագրություն և ազգային ու մշակութային բնութագրեր.

**Սևան Ազգային Պարկ ՊՈԱԿ (2009).** Սևան Ազգային Պարկի բիոբազմազանություն և ազգային ժառանգություն.

**REC Caucasus(2008): ՀՀ տարածաշրջանային պրոֆիլներ.**

*Կոտայքի մարզ, [www.rec-caucasus.org/Flash/PDF/AR/AR5.pdf](http://www.rec-caucasus.org/Flash/PDF/AR/AR5.pdf),*

*Գեղարքունիքի մարզ, [www.rec-caucasus.org/Flash/PDF/AR/AR6.pdf](http://www.rec-caucasus.org/Flash/PDF/AR/AR6.pdf),*

*Վայոց Ձորի մարզ, [www.rec-caucasus.org/Flash/PDF/AR/AR9.pdf](http://www.rec-caucasus.org/Flash/PDF/AR/AR9.pdf),*

*Սյունիքի մարզ, [www.rec-caucasus.org/Flash/PDF/AR/AR10.pdf](http://www.rec-caucasus.org/Flash/PDF/AR/AR10.pdf)*

**Միջազգային ֆինանսական կորպորացիա (ՄՖԿ) 2002թ.** Վերաբնակեցման գործողությունների պլանի մշակման ձեռնարկ:

**Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկ /Համաշխարհային Բանկ (2004).** Պարտադրված վերաբնակեցման տեղեկատվական գրքույկ, պլանավորում և իրականացում զարգացող ծրագրերում:

**Համաշխարհային Բանկ (2010):** Հայաստան երկիր.

**www.ifad.org (3/2011):** Գենդերայի Պրոֆիլ Հայաստանում.

### 9.4 Մարդահամարի անցկացման ձևաթղթի նմուշ

Տնտեսությունների սոցիալ-տնտեսական վիճակի վերաբերյալ հարցման ձև							
Գույքի սեփականատիրոջ անունը.			Գյուղի անունը.		Գնտվելու վայրը ըստ քարտեզի. GPS կորդինատներ _____	Վնասված գույք. (ավելացնել նկարագրություն, օր. 2 հեկ. գյուղացիական նշանակության դաշտ)	
<b>Տնտեսության կազմը</b>							
Ընտանիքի անդամի անունը	Սեռը	Տարիքը	Ընտանիքի գլխավորի հետ կապը	Հիմնական զբաղվածությունը	Երկրորդական զբաղվածությունը	Գրթության մակարդակը	Հիվանդություն կամ հաշմանդամություն
Օրինակ 1	Ար	34	Ընտանիքի գլուխը	Ֆերմեր	Սեզոնային աշխատանք	Ավագ դպրոց	Չունի
Օրինակ 2	Իգ	25	Կինը	Վաճառող	Չունի	Հանրակրթական դպրոց	Չունի
Օրինակ 3	Իգ	7	Դուստրը	Ուսանող	Չունի	Չունի	Չունի
Օրինակ 4	Ար	5	Որդին	Ուսանող	Չունի	Չունի	Չունի
<b>Մեփականաշնորհված արտադրական գույք</b> (պետք է նշել ամբողջ ունեցվածքը, այլ ոչ թե միայն էլեկտրահաղորդման գծում կորցրածը)							
չորոգվող հող(հա)	Հողատիրության կարգավիճակը	Ոռոգվող հող (հա)	Հողատիրության կարգավիճակը	Բերքատու ծառերի քանակը	Այլ ծառերի քանակը	Մեփականաշնորհված և շահագործվող առևտրային կառույցներ	Այլ սեփականաշնորհված կառույցներ
3 հեկ	սեփականատեր	0.5 հա	սեփականատեր	20	2	չունի	1 գում
<b>Ընտանիքի տարեկան եկամուտը</b>	<b>Եկամտի աղբյուրը (Չաբաժինը)</b>						
100.000 դրամ	Ագրարային հող	Ոռոգվող հող	Դրամական եկամուտ	Անասուններ	Առևտուր	Սեզոնային աշխատանք	Անտառային հատվածներ
	40%	20%	10%	5%	10%	10%	5%

### 9.5 Կորուստների գույքագրման Ձևաթղթի նմուշ

ID	Անուն	Ընտանիքի անդամներ/ աշխատողներ	Վնասված հող			Վնասված կառույցներ			Վնասված ծառեր		Ազդեցություն զբաղվածության վրա			Վերաբնակեցված		Դրամական նպաստ խոցելի ԱԵԱ համար		Դրամական նպաստ խիստ ազդեցության ենթարկված կարգավիճակի համար	
			Տեսակը	Մեփակա նաշնորհված հատվածը	Վնասված հատվածը	Տեսակ	Մենյակների քանակը	Վնասված հատվածը	Տեսակ	քանակ	Տեսակ	Մշտական	Ժամանակվոր	Այո	Ոչ	Այո	Ոչ	Այո	Ոչ
1	Օրինակ 1	6	Կարտոֆիլի դաշտ	500 ք մ	100 ք մ				Ծիրան	3					ոչ	այո		այո	
	Օրինակ 2	4				քար	1	100			Փոքր խանութ	այո		այո		ոչ		այո	
	Օրինակ 3	2	1.) Կարտոֆիլի դաշտ 2.) Խաղողի այգի	10.000 ք մ 300 ք մ	60 ք մ 100 ք մ										ոչ		ոչ		ոչ
	Օրինակ 4	5	Շինարարության համար նախատեսված հողատարածք	200 ք մ	200 ք մ										ոչ			այո	

## 10. Հանրային քնարկումների հանդիպման արձագանքություններ

### Շրջակա միջավայրի կառավարման պլաններ և Վերաբնակեցման քաղաքականության շրջանակ Հաղթանակ, Չարեցավան-3 և Վանաձոր-1 երթակայանների համար

#### Ներածություն

Հաղթանակ, Չարեցավան-3 և Վանաձոր-1 երթակայանների համար ՇՄԿՊ և ՎՔՇ հայերեն և անգլերեն լեզուներով հրատարակվել է հասարակության համար: 2014թ-ի մարտի 21-ից մինչև 2014թ-ի ապրիլի 1-ը տրված է որպես ժամանակահատված պարզելու մտահոգությունները և շահագրգիռ անձանց կողմից էլ. փոստով (տրամադրվել է ԲԷՑ-ի ամբողջական հասցեն) և հեռախոսով, որն աշխատաքային օրերին առկա կլինի ժամը 9:00-ից մինչև ժամը 18:00-ն մեկաբանություններ/պատասխաններ ստանալու համար:

#### Նյութեր և Մեթոդներ

ՇՄԿՊ-ի և ՎՔՇ-ի անգլերեն և հայերեն տարբերակերը տեղադրվել են ՀՀ Էներգետիկայի և բնական պաշարների նախարարության (<http://www.minenergy.am/en/en/investment-projects/high-voltage-network>) և Բարձրավոլտ էլեկտրական Ցանցեր ՓԲԸ-ի ([http://hven.am/event-s\\_34\\_2.html](http://hven.am/event-s_34_2.html)). ինտերնետային կայքերում:

ՇՄԿՊ-ի և ՎՔՇ-ի տպագրված տարբերակները հանձնվել են հետևյալ պետական լիազոր մարմիններին.

- Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջան՝ պրն. Ա. Ալեքսանյան, ղեկավար,
- Չարենցավանի քաղաքապետարան՝ պրն. Հ. Շահգալոյան, քաղաքապետ, և
- Վանաձորի քաղաքապետարան՝ պրն. Ս. Դարբինյան, քաղաքապետ

Ամփոփ տեղեկատվություն վերակառուցման աշխատանքների, ինչպես նաև ՇՄԿՊ-ի և ՎՔՇ-ի փաստաթղթերի հրապարակված վայրերի (իտերնետային կայքերի հասցեները և շրջանի քաղաքապետարանները/մարզպետարանները) վերաբերյալ, նաև ԲԷՑ-ի կոնտակտային տվյալները (ներառյալ ամբողջական հասցեն, էլ. փոստը, հեռախոսային համարները և կոնտակտային մարդկանց տվյալները) փակցվել են յուրաքանչյուր երթակայանի մոտքի մոտ կամ դարպասի վրա, որպեսզի մարդիկ կարողանան հղել իրենց հարցերը և արտահայտեն իրենց մտահոգությունները՝ կապված փաստաթղթերի հետ:

ՇՄԿՊ-ի և ՎՔՇ-ի էլեկտրոնային տարբերակները նաև ուղարկվել են հետևյալ ՀԿ-ներին.

- Բնապահպանության Հակոբյան Կենտրոն, Հայաստանի Ամերիկյան կենտրոն՝ պրն. Ա. Ամիրխանյան, տնօրեն,
- «Թրանսփերանսի ինթերնեշնլ» հակակոռուպցիոն կենտրոն, հայաստանյան մասնաճյուղ՝ տկն. Ս: Այվազյան, Նախագահ,
- Էներգախնայողության միության հայաստանյան մասնաճյուղ՝ տկն. Ա. Փասոյան, տնօրեն, և
- Աղքատ Լոռի ՀԿ՝ պրն. Վ: Բունաթիան, նախագահ:

## Եզրակացություն

Հանրային լուսամների ամբողջ ընթացքում ՇՄԿՊ-ի և ՎՔՇ-ի վերաբերյալ որևէ անհատից կամ իրավաբանական անձից չեն եղել բողոքներ, հարցեր, մտահոգություններ կամ մեկաբանություններ: Այդ իսկ պատճառով այս փաստաթղթերը համարվում են վերջնական ներկայիս տեսքով:

## Լուսանկարներ

*«Հաղթանակ» ենթակայանում փակցված ծանուցումներ*





*«Չարենցավան-3» ենթակայանում փակցված ծանուցումներ*



**«Վանաձոր-1» ենթակայանում փակցված ծանուցումներ**



**Վերաբնակեցման և սոցիալական ազդեցության գնահատում և  
վերաբնակեցման քաղաքականության շրջանակ Լալվար և  
Նոյեմբերյան գծերի փոխարինման համար**

Լալվար և Նոյեմբերյան օդային գծերի համար ՇՄՍԱԳ-ի և ՎՔՇ-ի հաշվետվությունների նախագծերը հրապարակվել են 2015թ-ի հունիսի 16-ին: Փաստաթղթերը հրապարակվել են ԲԷՑ-ի կայքում հայերեն և ազլերեն լեզուներով, իսկ հայերեն տպագրված տարբերակը ներկայացվել է բոլոր ազդակիր համայնքներին:

Հանրային լսումների հանդիպումը կայացել է Ալավերդու քաղաքապետարանում 2015թ-ի հուլիսի 1-ին: Համապատասխան հայտարարությունները ուղարկվել են տեղական մարմիններին էլ. փոստով, ինչպես նաև հանրային լսումների հանդիպումից երկու շաբաթ առաջ փակցվել են քաղաքապետարանների հայտարարությունների համար նախատեսված տախտակի վրա: Տեղական ՀԿ-ները տեղեկացվել են էլ. փոստով և անմիջապես կապվել են Օրիուս Կենտրոնի միջոցով:

Հանրային Քննարկումների ժամանակ Խորհրդատուն ներկայացրել է ոչ տեխնիկական ներածական մաս (սլայդների միջոցով)՝ ներկայացնելով ՇՄՍԱԳ-ի և ՎՔՇ-ի արդյունքները: Այս ներածական մասը ներկայացվել է պարզ, ոչ տեխնիկական տերմիններով, որպեսզի հասկանալի լինի նաև ոչ այնքան կիրթ մարդկանց համար: Այն ներկայացվել է անզլերենով և հաջորդաբար թարգմանվել հայերեն լեզվով: Հայերեն լեզվով բարձրացված բոլոր հարցերը թարգմանվել են անզլերեն լեզվով, ինչպես նաև այդ հարցերի պատասխաններն էլ համապատասխանաբար թարգմանվել են հայերեն: Պրեզենտացիայի համար ներկայացված սլայդները հայերեն լեզվով էին:

Այս ներածական մասում ներկայացվեց ծրագրի նկարագրությունը՝ նշելով, թե ով է կատարել հետազոտությունները, ինչպես նաև տրամադրվեց տեղեկատվություն այդ հետազոտությունների իրականացման և գնահատման միջոցների վերաբերյալ: Տեղեկատվություն է տրամադրվել Ծրագրի բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերաբերյալ, և մանրամասնորեն ներկայացվել են որոշ օրինակներ, ինչպես նաև մեղմացման միջոցառումները և դրանց վերահսկումը, նաև առաջարկները: Ներկայացվել են նաև ՇՄՍԱԳՊ-ը և Բողոքների Կարգավորման Մեխանիզմը և բացատրվել են Վերաբնակեցման Քաղաքականության Շրջանակի դրույթները: Ներածական մասն ավարտելուց հետո սկսվել են քննարկումները: Հանդիպման ժամանակ բարձրացված հարցերը և համապատասխան պատասխանները հետևյալն են.

Հարցեր/մտահոգություններ	Մասնակիցներ	Պատասխաններ
<p>Հաղթանակում ենթակայանին մոտ գործող գիծը թռիչք է կատարում տան վրայով: Տունն օրինականացվածչէ, քանի որ գծի միջանցքում չի թույլատրվում տուն կառուցել: Հաշվետվությունների մեջ այս տանը վերաբերող իրավիճակը հաշվի չի առնված: Հնարավոր է արդյոք, որ այս տունը գտնվի նոր գծի միջանցքից դուրս:</p>	<p>ՎահրամՇարոյան Հաղթանակ համայնքի ղեկավար</p>	<p>Քանի որ Նոյեմբերյան ենթակայանը էլեկտրամատակարարող գծի տեխնիկական տվյալները դեռ ֆիքսված չեն, դեռ պարզ չէ, արդյոք այս տունը կգտնվի գծի միջանցքում թե ոչ: Այնուամենայնիվ, Կապալառուն պետք է հետևի Համաշխարհային Բանկի պահանջներին, որտեղ ասվում է, որ հնարավորինս պետք է խուսափել բնակավայրերից: Այս պահանջը կլինի նախագծման և շինարարության պայմանագրի մասը:</p>
<p>Արդյոք հողի սեփականատերն իրավունքունի մերժել վաճառելու հողը:</p>	<p>Մուրեն Մաթոսյան Հաղպատ համայնքի ղեկավար</p>	<p>Հողի սեփականատերերին կառաջարկվի հենարանի տեղակայման համար պահանջվող հողատարածքը վաճառել շուկայական գնով՝ գումարած 15%: Ձախողման դեպքում Հանրային Գերակա Շահ ճանաչելու վերաբերյալ Կառավարության Որոշումը և հողի պարտադիր կերպով ձեռքբերման մեթոդը կկիրառվի: Շուկայական գինը կգնահատվի լիցենզավորված գնահատողի կողմից, որին կվարձակալի ԲԷՑ-ը/Կապալառուն:  (Մեծ Այրումի, Նեղոցի և Հաղթանակի համայնքների ղեկավարներն առաջարկեցին իրենց աջակցությունը նախագծային փուլում, որպեսզի ազդեցությունները հասցվեն նվազագույնի):</p>
<p>Մեծ Այրումի տարածքում այլ ընկերությունների կողմից իրականացված ծրագրերի ընթացքում շատ խախտումներ են եղել կապված հողի ձեռքբերման հարցերի հետ: Ինչպե՞ս է հնարավոր վստահեցնել, որ այս խախտումները չեն լինի այս ծրագրի ընթացքում:</p>	<p>Մահակ Նազարյան Մեծ Այրում համայնքի ղեկավար</p>	<p>ԲԷՑ-ի փորձառությունը՝ կապված ընթացքի մեջ գտնվող և ավարտված այլ ծրագրերի հետ, ցույց է տալիս, որ հողերի ձեռքբերման ընթացիկ գործընթացը, ինչպես նաև բողոքարկման մեխանիզմը շատ էֆեկտիվ են և թույլ են տալիս բոլոր ազդակիր մարդկանց հասցեագրել իրենց պահանջները:  Համայնքի ղեկավարներին քաջալերում ենք արտահայտել իրենց մտահոգությունները նախագծման նախնական փուլում, որպեսզի կազմակերպվի համագործակցություն ստեղծվի:</p>
<p>Այլ ընկերության կողմից իրականացված ծրագրի շրջանակներում եղել է դեպք, երբ հողի ձեռքբերման գործընթացի ընթացքում հարակից հողը դարձել է օգտագործման համար ոչ պիտանի, քայքայ այս փաստն անտեսվել է ընկերության</p>	<p>Մահակ Նազարյան Մեծ Այրում համայնքի ղեկավար</p>	<p>Ըստ Հայաստանի օրենքի, այն հողը, որն օգտագործման համար դարձել է ոչ պիտանի, ԲԷՑ-ի կողմից նույնպես ենթակա է ձեռքբերման:</p>

Հարցեր/մտահոգություններ	Մասնակիցներ	Պատասխաններ
կողմից: Ինչպե՞ս վստահեցնել, որ այս դեպքերը չեն լինի այս ծրագրի ընթացքում:		
Ովքե՞ր են հողի սեփականատերերը և ինչպե՞ս նրանք կստանան փոխհատուցում:	Մուրեն Մաթոսյան Հաղպատ համայնքի ղեկավար	Ծրագիրը կիրականացվի՝ հիմնվելով ՀՀ օրենսդրության և Համաշխարհային Բանկի ուղեցույցների, ինչպես նաև Վերաբնակեցման Քաղաքականության Շրջանակի վրա: Յուրաքանչյուր համայնքի համար կկազմվի Վերաբնակեցման Գործողության Պլան: Երբ գծի միջանցքը հաստատվի, կհատկորոշվեն ազդակիր հողերը և այս փուլում կկազմակերպվեն ազդակիր համայնքների հետ հանրային լսումներ: ՀԿ-ները նույնպես կհրավիրվեն մասնակցելու այս լսումներին:  Բոլոր ազդակիր մարդիկ իրավունք ունեն փոխհատուցման, անկախ այն փաստից, եթե նրանք օրինական սեփականատերեր են կամ վարձակալներ կամ ունեն հողոգտագործման ստանդարտ իրավունքներ:  Բոլոր աշխատանքները կմշտադիտարկվեն զուգահեռաբար:
Հնարավոր է արդյոք հողատարածքը վարձակալել, այլ ոչ թե գնել	Սպարտակ Բեգզանյան Նեղոց համայնքի ղեկավար	Ոչ, համաձայն ծրագրի, հողը պետք է ձեռքբերվի ԲԷՑ-ի կողմից:
Նեղոցում գտնվող տների վրայով չպետք է թռիչք լինի, որպեսզի խուսափենք վերաբնակեցումից:	Սպարտակ Բեգզանյան Նեղոց համայնքի ղեկավար	Համաշխարհային Բանկի հիմնական նպատակներից մեկն այն է, որ հնարավորինս պետք է խուսափել պարտադիր վերաբնակեցումից: Այսպիսով, ՇՄՍԱԳ-ի ուսումնասիրության մեջ առաջարկվում է շրջանցել Նեղոց գյուղը: Մակայն, սա կախված է վերջնական տեխնիկական նախագծից, եթե դա հնարավոր լինի:
Շինարարական փուլը պետք է կարգավորվի բերքահավաքի ժամանակահատվածի համաձայն, որպեսզի խուսափենք մշակաբույսերը վնասելուց:	Սպարտակ Բեգզանյան Նեղոց համայնքի ղեկավար	Այս մտահոգությունը կներառվի վերջնական ՇՄՍԱԳ-ի ուսումնասիրման մեջ: Ցանկացած դեպքում, հողի վերջնական ուսումնասիրման, շինարարության և շահագործման ընթացքում մշակաբույսերին հասցված վնասը պետք է փոխհատուցվի, որը կֆիքսվի Վերաբնակեցման Գործողության Պլանում:
Ո՞վ է պատասխանատու լինելու գծի միջանցքում առկա ծառերը կտրելու համար:	Անուշ Էվոյան Օրհուս Կենտրոն (ՀԿ)	Ծրագրի իրականացման ընթացքում պետք է հետևել տեղական օրենսդրության բոլոր կետերին: Ըստ ազգային օրենսդրության, պետական անտառների փայտանյութը պատկանում է

Հարցեր/մտահոգություններ	Մասնակիցներ	Պատասխաններ
		Անտառնտեսությանը: Համայնքային անտառներում համայնքը պետք է որոշի փայտանյութի բաշխման հարցը:
Ինչպ՞ս և ե՞րբ կկազմակերպվեն բիրագմագանության համար ուսումնասիրություններն ու հետազոտությունները: Ինչ վերաբերում է թռչունների և չղջիկներին, բացի պրեզենտացիայի ժամանակ ներկայացված մեղմացման միջոցառումներից, ուրիշ այլ միջոցներ կներկայացվեն, որպես ուսումնասիրության և հետազոտության արդյունք:	Անուշ Էվոյան Օրհուս Կենտրոն (ՀԿ)	Ուսումնասիրությունները պետք է իրականացվեն նախագծային փուլից հետո և պետք է ներառեն նաև տեղանքի հետազոտման արդյունքները պաշտոնական կազմակերպություններից ձեռք բերված առկա տվյալներով: Հետազոտությունից հետո փորձագետները հնարավոր է ունենան այլ առաջարկներ կամ լրացուցիչ մեղմացման միջոցառումներ, որոնք պետք է հաշվի առնվեն ՇՄՄԳՊ-ում:
Արդյոք տեղանքի հետազոտման և ուսումնասիրման գործընթացում ներգրավված փորձագետները կլինեն ազգությամբ հայ:	Անուշ Էվոյան Օրհուս Կենտրոն (ՀԿ)	Հետազոտման մեջ ներգրավված փորձագետների համար ազգային սահմանափակումներ չկան:

## Ալավերդիում Հանրային Լուսամաների հանդիպման մասնակիցներ

No.	Անուն	Կազմակերպություն
1	Անուշ Էվոյան	Օրհուս Կենտրոն (ՀԿ) Ալավերդի
2	Սպարտակ Բեգջանյան	Նեղոցի համայնքի ղեկավար
3	Վահրամ Շարոյան	Հաղթանակ համայնքի ղեկավար
4	Սահակ Նազարյան	Մեծ Այրում համայնքի ղեկավար
5	Սուրեն Մաթոսյան	Հաղպատ համայնքի ղեկավար
6	Ժորա Անդրեասյան	Ճոճկան համայնքում աշխատող
7	Սերգեյ Չերչինյան	Ճոճկան համայնքի առաջատար մասնագետ
8	Հրայր Նազարյան	Ալավերդի քաղաքապետարանի աշխատակից
9	Դետլի Պաուլշ	Ֆիլիթներ, բնապահպանության մասնագետ
10	Լուսինե Զաքարյան	ԲԷՑ-ի սոցիոլոգ
11	Պավել Հովհաննիսյան	ԷԱ Էներջի Ըղվայգրի, ծրագրի կոորդինատոր
12	Միքայել Թևոսյան	ԷԱ Էներջի Ըղվայգրի, բնապահպանության փորձագետ

### Ամփոփում

Լուսամանն անցան արդյունավետ և մասնակիցների ակտիվ մասնակցությամբ: Ազդակիր համայնքներից ներկա էին համարյա բոլորը իրենց համայնքների ղեկավարների կամ ներկայացուցիչների հետ միասին: Օրհուս Կենտրոն ՀԿ-ի տեղական մասնաճյուղերը ակտիվորեն մասնակցեցին քննարկումներին:

### Առաջարկություններ՝ ելնելով Հանրային Քննարկումների հանդիպումներից

- Համայնքի ղեկավարները ցանկություն արտահայտեցին, որ գյուղերում (մասնավորապես Նեղոց և Հաղթանակ գյուղերը) պետք է կատարվեն շրջանցումներ, որպեսզի խուսափենք որևէ ֆիզիկական վերաբնակեցումից:
- Համայնքի ղեկավարները առաջարկել են իրենց աջակցությունը նախագծային փուլում, որպեսզի ազդեցությունները հասցվեն նվազագույնի:
- Շինարարական աշխատանքները պետք է համապատասխանեն բերքահավաքի ժամանակահատվածին, որպեսզի խուսափենք մշակաբույսերը վնասելուց:

## Ալավերդիում Հանրային լսումների հանդիպման լուսանկարներ





